

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 74ԳԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 169 (20925) ՈՒՐԲԱԾ, 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2001 10 ԷՁ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Զօր. Լադոս Եւ Վահագ Յովհաննիսեան:

Երէկ, Հայաստանի Ազգային Ժողովի ներքին եւ պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ, Հ. Յ. Դ. Բերդյանի անդամ Վահան Յովհաննիսեան, ընկերակցութեամբ Հ. Յ. Դ. Լիւրսեանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յ. Միլիթարեանի, Կեդրոնական Կոմիտէի անդամ Յ. Թաթևեանի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ս. Յովհաննեանի, ինչպէս նաեւ Հայաստանի զեպպան Ա. Նաւասարդեանի, այցելեց Հանրապետութեան նախագահ Զօր. Լադոսին:

Խօսակցութիւնները Կեդրոնացան Լիւրսեան - Հայաստանի յարաբերութեան եւ գործակցութեան վրայ քննարկուեցաւ նաեւ շրջանի իրավիճակը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԱՐԱԵՄԻ ԿԵԴՐՈՆ



ՄԱՐԱԵՄԻ ԿԵԴՐՈՆԻՆ ԴԷՅ:

Ապա Վահան Յովհաննիսեան, իրեն ընկերակցող Հ. Յ. Դ. Լիւրսեանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի զեպպան Ա. Նաւասարդեանի այցելեցին Միլիթարեանի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնները:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ԱԶԳԱԿ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ

ԱԶԳԱԿ



ՆՈՒՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱՌՈՒԹԵԱՆ ԿԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
10ԱՄԵԱԿԻՆ

ԹԱԼԵՊԱՆՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ԸԱԿԱԴԱՐՁԵԼ ՔԱՊՈՒԼԻ ԴԵՍ ՈՐԵԻ ԶԱՐՁԱԿՈՒՄԻ

Աֆղանիստանի մէջ իշխող Թալեպան իսլամական շարժումը երէկ նշեց իշխանութեան հասնելու հնգամեակը՝ մարտահրաւերներ ուղղելով ամերիկեան ղեկավարութեամբ կազմուող միջազգային ճակատին՝ սպառնալով հակադարձել Քապուլի դէմ գործուելիք որեւէ յարձակումի:

Թալեպանի ղեկավար մուլա Մոհամեդ Օմար Վելուշաուզ բոլոր անոնք, որոնք Միացեալ Նահանգներուն հետ կը գործակցին իշխանութեան հասնելու համար: Մուլա կ'ակնարկէր աֆղան ընդդիմադիր ուժերու ու անոնց ղեկավարներուն. որոնք քանի մը տարիէ ի վեր կը կոռուին տապալելու համար Թալեպանի իշխանութիւնը եւ երկիրն ղեկը ստանձնելու համար: Թալեպանի ղեկավարը աւելցուց, որ ուրեք աֆղան. որ ամերիկեան օժանդակութեան կը դիմէ. որպէսզի իշխանութեան հասնի, պիտի են-

թարկուի նոյն ճակատագիրին. որուն ենթարկուեցան խորհրդային Միութեան ուժերու հետ գործակցողները 1980ական թուականներուն: Մուլա Օմար ըսաւ նաեւ, որ Ամերիկա արդարացուցիչ որեւէ պատճառ չունի Աֆղանիստանի վրայ յարձակելու:

Ուշիկը կը պնդէ, որ Թալեպան պէտք է յանձնէ Ուսամա Պըն Լատէնը, որուն դէմ կ'ուղղուին Նիւ Եորքի ու Ուաշինկթընի յարձակումները ծրագրած ըլլալով ամբաստանութիւններ: Արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Արմիթէյձ երէկ վերադառնալով շեշտեց այս պահանջը, դիտել տալով, որ անիկա բանակցելի չէ: Ան կը խօսէր Թալեպանի կողմէ մարդկային ու քաղաքային իրաւունքներու պաշտպան ձեւի ձեռքարկի ուղղուած Փաքիստան այցելութեան հրաւերին առիթով: Կը նախատեսուի, որ ձեռքարկ նաեւ Աֆղանիստանի պիտի ուղղուի՝

բանակցելու համար Թալեպանի ղեկավարներուն հետ:

Մինչ այդ, Աֆղանիստանի սահմանակից Փաքիստանի մէջ իշխանութիւնները ձեռնարկեցին յայնաժամարշաւի մը՝ ձեռքարկելու համար Պըն Լատէնի հետեւորդներն ու գործակիցները: Միւս կողմէ, հակառակորդ փաքիստանցիներ նախագահ Փերվէշ Մուշարրաֆի ի նպաստ ցոյց մը կազմակերպեցին, իբրեւ զօրակցութիւն Միացեալ Նահանգներուն կողքին կենսալու անոր կեցումը քննարկելու:

ՊՈԻՇ ԸԱՆԴՈՒԹՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՅ ԿՈՂԴԵ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ

Սիւի կրօնաւորներու հետ ունեցած խաղի պիտի մը ընթացքին, Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշկոյ ուղղեց ամերիկացիներուն հանդիմանողներուն:

Ծար. ք' էջ 3

ԸԱԿԱՌԱԿ ԱՐԱՖԱԹԻ ԵՒ ՓԵՐԵՍԻ ՄԻՋԵԻ ԳՈՅԱՅԱԾ ԸԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԲՈՒՌՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՊԱՂԵՍՏԻՆՅՈՒՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

Անտեսելով Արաֆաթի ու Փերէսի միջեւ գոյացած վիճադուլի համաձայնութիւնը, իսրայէլեան ուժեր երէկ Կազախ մէջ բուռն բախումներ ունեցան պաղեստինցիներուն հետ: Չորեքշաբթի գիշերուընէ սկսած բախումները խլեցին երեք գոհ եւ աւելի քան

27 վիրաւոր, յայտնեցին պաղեստինեան աղբիւրները: Ականատեսներ յայտնեցին, որ բախումները մեղմացան երէկ կէսօրէ կազախ կարգ մը թաղամասերուն մէջ կրակոց կը յարձակուին իսրայէլեան ուժերը:

Խուճը մը պաղեստինցի մահուկներու վրայ, որոնք կը փորձէին անիւներ աշտի փողոցներուն մէջ, ուր հաւաքուած էին հազարաւոր պաղեստինցիներ, մասնակցելու համար յուղարկուողութեան գիշերուան բախումներուն սպաննուածներուն: Իսրայէլեան հրաձգութիւնը արձակուած ռումբեր փլեցին եռաշարկանի շէնք մը:

Բախումներուն յոյսին տակ, իսլամական Համաս շարժումը բարձրաձայնեց իր պաղեստինցիներէն կը պահանջէր չենթարկուիլ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթի եւ իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէսի միջեւ գոյացած վիճադուլի համաձայնութեան: Արաֆաթ եւ Փերէս հանդիպում ունեցած էին Չոբեյնի մէջ, որ եւ համաձայնեցին, որ գինադուլ պէտք է հաստատ մնայ առիթ տալու համար իսրայէլեան զինուորական ղեկավարներու փոխարինելու փորձերը: Իսրայէլի տեղեկագիրին կիրարկման:

Դէտեր սակայն վստահ չեն, որ ինքն օր առաջ յայտարարուած գինադուլը պիտի կարենայ դիմաւոր, այնքան առեւ, որ փոխադարձ անվստահութիւն ու լարուած միջոցաւ կը տիրէ Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ, որոնք մէկ տարիէ ի վեր զիրար կը սպաննեն: Իսրայէլ կը պահանջէ, որ Արաֆաթ յաւելեալ ճիգերու դիմէ զսպելու համար ծայրայեղականները: Իսկ պաղեստինցիները կ'ամբաստանեն իս-

Ծար. ք' էջ 10

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ ՄԵԿԵՆՅԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ



Պատարագի ընթացքին:

Յովհաննէս Պօղոս Բ. պապը երէկ առաւօտուն Ս. Էջմիածինի նորածն Ս. Տրդատ բաց խորանին առջեւ մատուցեց յատինածէս պատարագ:

Արարողութեան սկիզբը Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը ողջունեց պապը եւ հաւատացեալները: Կաթողիկոսը իր խօսքին մէջ նշեց. «Հաւատքի մեր մեկուցիւնը այն կարեւոր գործօնն է, որ առանձնապատկուածութիւններով հանդերձ կը միաւորէ մեր եկեղեցիները նոյն առաքելութեան շուրջ»:

Ապա խօսք առաւ պապը: Իր քարոզին մէջ պապը փառարանեց Հայ Ժողովուրդի 1700ամեայ հաւատքը: Ան նշեց, որ Հայ կաթողիկոսներու փառքերուն շնորհիւ երբեք խռովութիւն չէ եղած առաքելական եւ կաթողիկ եկեղեցիներուն միջեւ: Պապին քարոզէն ետք տեղի ունեցաւ պատարագ:

Միասկաւարութիւններու աւարտին, պապը եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը ստորագրեցին միացեալ յայտարարութիւն մը: Յայտարարութեան մէջ նշուած էր. «Մէկուկէս միլիոն Հայ քրիստոնեաներու ջարդը, որուն կ'անդրադառնան իբրեւ 20րդ դարու առաջին Յեղասպանութիւն, ողբերգութեան օրն է, որ տակաւին թարմ է այսօրուան սերունդին յիշո-



Պապը կը համբուրէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքներու դամբարանը:

դութեան մէջ»:

Պապը երէկ այցելեց նաեւ Քանաքեռի Հայ կաթողիկէ եկեղեցին, ապա խոր Վիրապ:

Պապը եւ Գարեգին կաթողիկոսը շարականներու երգեցողութեամբ մուտք գործեցին խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսաւորիչի մատուռը: Մատուռն մէջ երկու հովուապետներ աղօթք մատուցեցին: Կաթողիկոսը պապին յանձնեց մատուռն մէջ բողոքաբանող Լուսաւորիչի Կանթեղէն վառած ճրագը:

Խոր Վիրապին պապը ուղղուեցաւ «Ջուարբնոց» օղակայան: Օղակայանին մէջ տեղի ունեցաւ մեկուսման պաշտօնական արարողութիւն: Պապին բարի ճանապարհ մաղթելու համար «Ջուարբնոց» ժամանած էր նախագահ Ռոպէրթ Քոչարեան: Նախագահը իր խօսքին մէջ պապին այցելութիւնը որակեց պատմական, որ նաեւ իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ Վատիկանի եւ Հայաստանի յարաբերութիւններուն վրայ: Գարեգին կաթողիկոսը պապին այցելութիւնը նկատեց երկու եկեղեցիներու սիրոյ եւ եղբայրութեան արտայայտութիւն: Պապը իր հրաժեշտի խօսքին մէջ երախտապարտութիւն յայտնեց նախագահին եւ կաթողիկոսին հիւրընկալութեան համար: Պապը խօսեցաւ նաեւ Հայ Ժողովուրդի անսասան ոգիին մասին, որ «հասնելով բնաջնջման սեմին, դիմակայած է դաժան փորձութիւններ» անցեալ դարասկզբի զարհուրելի զէպքեր եւ աղիտալի երկրաշարժ: Պապը իր խօսքը փակեց բանաստեղծ Յովհաննէս Թուրանեանին մէջըրերելով Հայրենասիրութեան մասին խօսք մը: Այնուհետեւ պապը ուղղուեցաւ դէպի Վատիկան:

Ծար. ք' էջ 10

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ



Վարչապետը կ'ընդունի Ֆրանսայի դեսպանը:

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երեկ կրթական խորհրդատու Վերաճատարեց, թէ Հիւսթոն կը մերժէ ահաբեկչութիւնը եւ անվարան կը պաշարի անոր դէմ, մանաւանդ, որ քսան տարի տառապած է անկէ:

Միացեալ Նահանգներու դէմ ահաբեկչական արարքները զատապարտելով Հարիրի նկատել տուաւ, որ անոնք վնաս հասցուցին Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ արաբական եւ իսլամական դադութներուն, որոնք նախապէս կապն էին իրենց հայրենիքներուն ու յառաջդրած աշխարհին միջեւ:

Հեռակայ գրութեամբ ուսման նուիրուած այս ժողովին Հարիրի նաեւ կոչ ուղղեց կրթական բնագաւառէն ներս օգտուելու արդի արհեստագիտութենէն միաժամանակ ընդգծելով, որ ասիական պէտք չէ կատարուի դպրոցէն կամ համալսարանէն ներս անձերու միջեւ մարդկային հաղորդակցութեան հաշուոյն:

Վարչապետ Հարիրի երեկ ընդունեց Հիւսթոնի մէջ օտար պետութեանց դեսպաններ եւ անոնց հետ քննարկեց Միացեալ Նահանգներու դէպքերուն ստեղծած իրավիճակն ու ահաբեկչութեան դէմ արշաւը:

Եւրոպական Միութեան նախագահ Պիեթրի Հիւսթոնի մէջ դեսպան Ֆրանսուազ Կլիսթէն յայտարարեց, որ չըբանային ու միջազգային իրավիճակէն քննարկումին առիթով Հարիրի վերահաստատած է Հիւսթոնի պատրաստակամութիւնը գորակցելու եւ գործակցելու ահաբեկչութեան դէմ միջազգային ճիգերուն հետ: Դեսպանը նաեւ ըսաւ, որ խօսուած է Հիւսթոնի տնտեսական վիճակի բարելաւելու կառավարութեան քայլերուն մասին:

Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթին Հարիրիի հետ իր ունեցած հանդիպումէն ետք ըսաւ, որ խօսուած է երկկողմանի յարաբերութիւններուն եւ միջազգային

Ծար-ը՝ էջ 3

ՄԱՀԱՁԴ

Այնթապի Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը գումէ իր անդամուհիներէն

ԼՈՒՍԻՆ ԱՆՍԸՐԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր 2001ին:

ՄԱՀԱՁԴ

Տիար Յակոբ Անսրլեան
Տէր եւ տիկին Պետրոս Անսրլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժաք Անսրլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ներսէս Անսրլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարապետ Սապուհեան եւ զաւակունք
Տիկին Սիրանուշ Խտրլարեան եւ զաւակունք
Տիկին Ռոզին Իսկէնեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Իսկէնեան
Անսրլեան ընտանիք
Իսկէնեան ընտանիք
Խտրլարեան ընտանիք
Պալապանեան ընտանիք
Տէր Գէորգեան ընտանիք
Մեսրոպեան ընտանիք
Խաչատուրեան ընտանիք
Առաքելեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումէ իրենց կնոջ, մօր, անեմօր, քրոջ եւ հարազատին՝

ԼՈՒՍԻՆ ԱՆՍԸՐԼԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԻՍԿԵՆԵԱՆ, Դամասկոս, 1931ին)
մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր 2001ին:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ծարաթ, 29 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրանսիոյ Երազմէր Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իրիւ մահազոյ:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Պաքի շէնք, 3րդ յարկ, «Արմէնիա» պողոտայ, Ծարաթ 29 եւ Կիրակի 30 Սեպտեմբերին եւ երկուշաբթի 1 Հոկտեմբերին:
- ՄԱՆՕԹ: - Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել Այնթապի Հայրենակցական Միութեան Զբաւոյ Սանքրու Ֆոնտին:

ՄԱՀԱՁԴ

Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ դպրաց դասը կը գումէ եկեղեցւոյ երկար տարիներու վաստակաշատ երէց սարկաւազ՝

ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 26 Սեպտեմբեր 2001ին, լեւ կարճատեւ հիւանդութեան:

ՆԱԽԱԳԱՐ ԼԱՇՈՒՏ - ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸԱՆԴԻՊՈՒՄ

Նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երեկ ընդունեց վարչապետ Ռաֆիկ Հարիրիին. որ ներկայացուց Սէուտական Արաբիա իր այցելութեան եւ սէուտցի պաշտօնատարներու հետ ունեցած տեսակցութիւններուն արդիւնքները:

Հարիրի յայտնեց, որ նախագահ Լահուտի փոխանցած է Սէուտական Արաբիոյ Ֆահի թագաւորին. զաւանգած է իսլամական Ապտալլայի եւ պաշտպանութեան նախարար իշխան Սուլթանի ողջոյնները: Ան ըսաւ, որ հանդիպումին քննարկուած են շրջանային ու միջազգային վարչացումները, անոնց գծով Լիբանանի կեցւածքն ու նախարարաց խորհուրդի ժողովին օրակարգը:

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան նախագահ Երեսփոխան Ռալիտ Ժոմպաթ եւս այցելեց ւ ա ի ս ա գ ա ի ն քննարկելու երկրին ընդհանուր վիճակն ու վերջին վարչացումները:

Նախկին Երեսփոխան Թամմամ Սալամ նախագահին հետ երէկուան իր տեսակցութենէն ետք իրապարակեց յայտարարութիւն մը. ուր յայտարարեց, թէ նախագահը



Ժոմպաթ Գախագահ Լահուտի մօտ:

նկատել տուաւ, որ Լիբանան յստակօրէն պարզիկ կը կանգնի ահաբեկչութեան վերջ դնելու միջազգային ճիգին. բայց այս պայքարը ժողովուրդներու արդար իրաւունքներուն եւ դատերուն հաշույն պէտք չէ ըլլայ:

Այսպիսի դատերէն կարեւորագոյններէն են պաղեստինեան հարցն ու իսրայէլեան ահաբեկչութեան դէմ լիբանանեան դիմադրութիւնը. ըսաւ նախագահ Լահուտ. նկատել տալով որ միջազգային լրատու միջոցներուն մօտ սիոնական հեղինակութիւնն ու ապրեցութիւնը կը խեղաթիւրէ ճշմարտութիւնները եւ ամերիկեան ու միջազգային հանրային կարծիքները կը խաբէ պնդելով, որ պաղեստինցի ժողովուրդի արդար պայքարը ահա-

բեկչութիւնն է. «Իսկ մենք, լիբանանցիներս, իսրայէլեան ահաբեկչութենէն տառապելէ ետք քաջ գիտենք այս խեղաթիւրումը»:

Նախագահ Լահուտ նաեւ հաւաստեց, որ օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները խորհրդակցաբար եւ անընդհատ համակարգումով կ'աշխատին պատրաստ ըլլալու ներքին եւ արտաքին բոլոր հաւանակաւորութեան մէջ, աւելցրելով որ հանդիպումին խօսուած է միջազգային այս պայմաններուն մէջ եւ տնտեսական ու ապրուստի տագնապներին դէմ դնելու համար ներքին ճակատը ամրապնդելու անհրաժեշտութեան մասին:

ՇԷՅԻՆ ՆԱՍՐԱԼԼԱՅԻ ԿՈՉՐ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Հրդպալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա երեկ պաղեստինեան ինթիֆառայի շղթայի վերջին միջոցառումին տարեդարձին առիթով կազմակերպուած հաւաքին արտասանեց խօսք մը, որուն մէջ նկատել տուաւ, որ աշխարհի բոլոր սիոնականները պօրաշարժի ենթարկած են իրենց քաղաքական, իրատական եւ մշակութային լծակները՝ արաբներուն ու իսլամներուն ճակատին ահաբեկչութիւն պիտակը փակցնելու եւ անոնց դէմ կիրքեր հրահրելու նպատակով:

Պաղեստինցիներուն եւ իսլամներուն ուղղելով ամբաստանութիւնը՝ սիոնականներու նպատակն էր բոլոր մղել շփոթի, զգացականութեան եւ

վախի հակազդեցութիւն ունենալու:

Ան ընդգծեց, որ այս պահուն անհրաժեշտ է ինքզինք պահել եւ դուրս գալ մեղաւորի կամ տկարի հոգեվիճակէն եւ կառչած մնալ մեր դատերուն, սկզբունքներուն, իրաւունքներուն եւ ընտրանքներուն:

«Բոլորս կը դատա-

պարտենք ահաբեկչութիւնը, բայց ընդունելի չէ, որ մեզմէ ոմանք անձնապանութիւն գործեն կամ իրենց ժողովուրդները անդունդի տանին միմիայն որպէսզի ահաբեկչութեան մեծամեծները զիրենք խնայեն ահաբեկչը ըլլալու զրպարտութենէն», ըսաւ ան:

ԲԱՅՕԹԵԱՅ

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ

Կատարողութեամբ՝

ՍԱԼԻ ԲԵԼԵՇԵԱՆԻ

Ընկերակցութեամբ՝

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ

ԵՂԱՅՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ

«ՕՐՇԵՐԳ» ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ

Շովանաւորութեամբ՝

ԷԼԼԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵՂՈՆԻ

Տեղի կ'ունենայ Ծարաթ, 29 Սեպտեմբեր 2001. երեկոյեան ժամը 8:00ին, Էիլմի մարզադաշտին մէջ. Ուսուստա:

ՀՐԱԷՐ

ԿՈՒԶԵՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԴ

ՓՕԼԻԿԼՕԹ

ԹԵՔՆԻԲԸԼ ՔՈԼԵԳ

- Business Administration
- Computer
- Marketing
- Teaching Diploma
- Պետական վկայական T. S (B. A.)
- Մատչելի կրթաթոշակ եւ վճարման դիւրութիւն
- Ցերեկային եւ գիշերային դասարաններ
- Անգլերէն եւ ֆրանսերէն բաժիններով

Արձանագրութիւն ամէն օր

ՓՕԼԻԿԼՕԹ ԹԵՔՆԻԲԸԼ ՔՈԼԵԳ, Տորա, հեռ. 01 - 251320 եւ 03 - 299484:

ՏԵՐ ԵՒ ՏԵՐԵՆ ՊԵՏՐՈՍ ԶԵՄԵՆԱՆ

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՌԻՏ ԸՆԴՈՒՆԵՅ Ս. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՄՊԱՆԸ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտ երեկ նախարարութեան ընդհանուր քարտուղար Չուէէյր Համտանի եւ քաղաքական բաժնի վարիչ Նաժի Ապի Ասիի ներկայութեան ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլը:

Խօսուեցաւ յառաջիկայ շաբթուան ՄԱԿի Ընդհանուր Ժողովին օրակարգին վրայ տեղ գտած ահաբեկչութեան դէմ պայքարի հարցին մասին. Պէթըլ փոխանցեց, որ Ռաշիկըն կը մաղթէ, որ արաբական երկիրները այդ պայքարին նեցուկ կը կանգնին:

ՄԻԻՖԹԻՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հանրապետութեան միջին Մոհամէտ Ռաշիտ Քապպանիի նախագահութեամբ երեկ գումարուած միջիններու ժողովէն ետք իրապարակուած հաղորդագրութիւնը վերահաստատեց ժողովականներու դատապարտումը Ռաշիկընի եւ Նիւ Եորքի ահաբեկչական արարքներուն. եւ ընդգծեց, թէ անընդունելի է ահաբեկչութիւն որակել հայրենի հողի ազատագրումին համար ժողովող պայքարը:

Ահաբեկչութիւն քառք յատակ եւ ճշգրիտ սահմանումի կը կարծուի. որպէսզի իրարմէ զանգանէ ինքնամայատակ վայրագ արարքն ու ինքնապաշտպանութեան կամ իրաւունքի եւ արժանապատուութեան պաշտպանութիւնը. ըսաւ հաղորդագրութիւնը. հաստատելով, որ ահաբեկչութեան դէմ կարելի չէ պայքարի վայրագ եւ ահաբեկչական արարքներով:

ՎԵՐԱՅ ԶԱՅՆ

Այսօր, կէսօրուան ժամը 1:00ին կընաք լսել մեր հարցազոյցը՝

ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ հետ

Հայաստանի ներկայ կացութեան եւ դիմագրաւած հարցերուն մասին:

● Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 6:30ի լուրերէն ետք:

ՎԵՐԱՅ ԶԱՅՆ

Այսօր, կէսօրուան ժամը 2:00ին կընաք լսել յատուկ յայտագիր մը հանգուցեալ **ԸՆԿ. ԽԱՐԱԿ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ** մասին:

● Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 9:00ին:

ՄՏՔՈՎ ԹԵՐԱԶՀԱՅ ՄԱՆՈՒՆԵՐՈՒ

«ՉՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵԴՐՈՆ

ԿԵՐԱՄՈՒՏ

2001-2002 ՏԱՐԵՇՐԱՆԻ

- Արձանագրութիւնները կը շարունակուին Սեպտեմբեր 24էն սկսեալ. առաւօտեան ժամը 9:00էն 12:00, բացի Ծարաթ եւ Կիրակի օրերէն:
- Վերամուտ՝ երկուշաբթի, 1 Հոկտեմբեր 2001ին:

Կեդրոնը կը շարունակէ ընդունիլ հին եւ նոր աշակերտներ՝ երկսեռ մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ:

Կեդրոնը ունի աշխատանքի դրութիւն եւ ինքնաշարժի սպասարկութիւն:

Հասցէ՝ Խալիլ Պատաուի. Գախկին Կենաց վարժարան:

Հեռաձայն 01-446442:

Հեռապատմէն 01-562373:

Ծանօթ.՝ Մասնագիտացած դաստիարակութիւնը առաւել չափով արդիւնաւետ կ'ըլլայ. երբ մանուկներ փոքր հասակին կեդրոն ներկայանան:

ՏԵՍՉՈՒԹԻՆ

Yerevan

Armenian products

Gifts For Any Occasion

Address : Bourj Hamoud, Municipality Street, Facing Center Arinc, # 63 Street Fax: 01/254747 Tel.: 01/254747 - 03/348105, E-mail: tammy@lynx.net.lb

STUDIO

Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video

Ըկարահանումներ

Հեռ. 01-260866 եւ 03-995399

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԸՆԴՎՁԱԾ Է ՊԵՐԼՈՒՍՔՈՆԻԻ ԴԷՄ

ՀՌՈՄ, 27 (ՌՈՅԹԸՐԶ).- Իսլամական աշխարհը ընդվզած է Իսալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնիի դէմ՝ դատապարտելով անոր կատարած մէկ յայտարարութիւնը արեւմտեան քաղաքակրթութիւններու գերակայութեան մասին:

Պերլուսոնի յայտարարութիւնը կատարած էր Չորեքշաբթի օր, Գերմանիոյ մէջ, ուր ըսած էր, թէ Արեւմուտքը պէտք է անդրադառնայ, որ իր քաղաքակրթութիւնը գերակայութիւն կը վայելէ եւ կապուած է արժէքներու ու չափանիշներու դրութեամբ մը, որ առիթը կու տայ բարգաւաճման եւ կ'երաշխաւորէ մարդկային իրաւունքներու եւ կրօններու հանդէպ յարգանքը: Պերլուսոնի քայլ մը աւելի երթալով աւելցուցած էր, որ այսպիսի արժեքներ գոյութիւն չունին իսլամական երկիրներուն մէջ:

Արաբական ու իսլամական աշխարհի մասնուր խիստ ոճով դատապարտեց Պերլուսոնիի յայտարարութիւնը, վարմանք յայտնելով, որ եւրոպացի ղեկավար մը նման արտայայտութիւն կ'ունենայ: Իսլամական աշխարհի ղեկավարներ եւս ընդվզած են եւ կ'ըսեն, որ Պերլուսոնի իր խօսքերով յարձակում գործած է իսլամութեան վրայ: Անոնք աւելցուցին, որ այս յայտարարութիւնը ողբերգական բախում մը կրնայ պատճառել իսլամներու եւ ոչ իսլամներու միջեւ:

Պերլուսոնիի յայտարարութիւնը դատապարտեցին նաեւ Եւրոպական Միութեան անդամներ: Եւրոպական Միութեան ներկայ նստաշրջանի նախագահը՝ Պելճիքա դատապարտեց Պերլուսոնիին: Վարչապետ Կի Վերիֆֆթթատ վարմանք յայտնեց, որ Պերլուսոնիի այսպիսի յայտարարութիւն մը կատարած է: Վարչապետը աւելցուց, որ Եւրոպական Միութիւնը ամբողջութեամբ հիմնուած է այլապէս մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու հանդիպման վրայ: Ան դիտել տուաւ, որ այսպիսի արտայայտութիւններ վտանգաւոր են, որովհետեւ նուաւստացում կը պատճառեն:

Եւրոպայի մէջ վանապան միութիւններ դատապարտեցին իտալացի ղեկավարին արտայայտութիւնը, ոմանք մինչեւ իսկ ցեղապաշտական նկատեցին էլոյթը, մինչ կարգ մը խմբակցութիւններ ողջունեցին Պերլուսոնիի արտայայտութիւնները, բաժնելով անոր կարծիքը:

Թիւն ցուցաբերելու այլ կրօնքներու հանդէպ: Պուշ կը խօսէր հակա-իսլամական մթնոլորտի մը տարածման առիթով, որ ծայր տուաւ յարձակումներէն ետք: Հակաիսլամական արարքներու փոխ փոխի քանի մը իսլամներ, որոնց կարգին է նաեւ սիւն մը:

Պուշ հանդիպում ունեցաւ նաեւ իսլամ եւ արաբ-ամերիկացի ղեկավարներու հետ՝ համոզելու համար ամերիկացիները, որ իսլամութիւնը խաղաղութեան կրօնք է: Պուշ ըսաւ, որ ինք բազմիցս յայտարարած էր, որ պատերազմը ծայրալեղանկաններու դէմ է եւ թէ իսլամութիւնը խաղաղութեան ու բարիքի վարդապետութիւն մըն է:

ՌՈՒՍԻԱ ՊԻՏԻ ԶԻՆԵ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐԸ

Ռուսիա նախկին Խորհրդային Միութեան պէնքերով պիտի պիտէ Աֆղանիստանի ընդդիմադիր ուժերը, յայտնեց պաշտպանութեան նախարար Սերկէյ Իվանով:

Իվանով, որ կը խօսէր Պրիւքէլի մէջ, ըսաւ, որ խորհրդային հին պէնքերը աւելի կը յարմարին Աֆղանիստանի լեռնային մակերեսին քան գերարդիական արհեստագիտութեան պէնքերը: Իվանով աւելցուց, որ Թալիպանի դէմ պատերազմող ընդդիմադիր ճակատը խորհրդ-

դային պէնքերը միայն կը սիրէ եւ կ'ուզէ վանոնք գործածել:

ՍՈՒՊԱՐԱՔԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐՐՈՊԱՅԻ ՌԻ ԱՐԱՔ ԴԻՖԱՆԱԳԵՏՆԵՐՈՒ ՇԵՏ

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ հանդիպումներ ունեցաւ եւրոպացի ու արաբ դիւանագետներու հետ, համակարգելու համար համաշխարհային հակապաշտպանութիւնները ամերիկեան յարձակումներուն հանդէպ:

Եւրոպական Միութիւնը ներկայացնող բարձրատիճան պատուիրակութիւն մը հանդիպում ունեցաւ Մուպարաբի հետ, որուն յայտնեց Եւրոպայի կեցուածքը Ուաշինկթընի յայտարարած հակահարձակութեան արշաւին հանդէպ: Պատուիրակութեան նախագահը ըսաւ, որ Մուպարաբ եւս համաձայն է, թէ ահաբեկչութեան դէմ պէտք է պայքարիլ օրինական քայլերով, ինչպէս նաեւ՝ ուղղակի գործողութիւններու միջոցով:

Արաբական երկիրները դատապարտած են Սեպտեմբեր 11ի յարձակումները, բայց եւս այնպէս անոնցմէ ոմանք վերապահ են ամերիկեան պիւնտ-րական հակադարձութեան մը ծրագիրին մասին: Եգիպտոս կոչուողած էր Ուաշինկթընի հրաժարելու պիւնտ-րական գործողու-

Շարունակուած Ա. ԷջԵԸ

թեան ծրագիրէն, դիտել տալով սակայն, որ յանցաւորները պէտք է պատժուին:

Մուպարաբ տեսակցութիւններ ունեցած էր նաեւ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրոյի եւ Մեյտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Սէուտ Ֆայսալ իշխանին հետ: Շաբաթավերջին, Մուպարաբ հանդիպումներ պիտի ունենայ արաբ այլ պաշտօնատարներու հետ, համակարգելու համար արաբական միացեալ կեցուածք մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՏՈՒՆ

Հայաստանի նախագահին բանբեր Վահէ Գաբրիէլեան երէկ մամոյ ատուիսի մը ընթացքին յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ պաշտօնական դիմում կատարած են Հայաստանին, խնդրելով տրամադրել երկրին օդային տարածքը՝ հակահարձակչական գործողութիւններու համար: Վահէ Գաբրիէլեան նշած է, թէ Հայաստան ընդառաջած է ամերիկեան առաջարկին:

● ՎԱՏԻԿԱՆ ԵՐԵԿ ՎԵՐԱՄԻՆ յայտնեց, որ Միացեալ Նահանգներ ինքնապաշտպանութեան դիմած պիտի ըլլան, եթէ պիւնտ-րական գործողութեան մը դիմէ պաշտպանելու համար իր

քաղաքացիները ապագայ յարձակումներէ:

● ՅՈՐԴԱՆԵՆԻ Ապտալա թագաւորը Ուաշինկթընի մէջ տեսակցեցաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլի եւ Ազգային Ապահովութեան խորհրդ-Ռատու Քոնտոյնսս Ուայսի հետ: Անոնք արծարծեցին միջինատեղեան տագնապին եւ ահաբեկչութեան դէմ արշաւին կապած հարցեր:

Ապտալա թագաւորը այսօր կը տեսակցի նախագահ ձորձ Պուշի հետ, ապա կը վերադառնայ Ամման:

● ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵՒՆ մէկ պատւիրակութիւնը Դամասկոս հասաւ երէկ, նախագահ Պաշշար

Ասադի հետ քննարկելու միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին կապուած հարցեր: Պատուիրակութիւնը կը գլխաւորէ Պելճիքայի արտաքին գործոց նախարար Լուի Միշէլ:

● ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ տեղեկատուութեան նախարար Խուսրու-թուլա Ժամալ երէկ ըսաւ, որ կը հաւատայ թէ Ռուսա Պրն Լատին տակաւին Աֆղանիստան կը գտնուի, սակայն շեշտեց, որ ահաբեկչութեան դէմ արշաւին կապած հարցեր: Պատուիրակներու ֆաթուան՝ հեռանալու Աֆղանիստանէն՝ անոր հասած է հաւանաբար կամ պիտի հասնի անպայման, յատուկ պատուիրակի մը ձեռամբ, որովհետեւ այդքան ալ դիւրին չէ գտնել Պրն Լատինը: (ՌՈՅԹԸՐԶ)

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ...

Շարունակուած 2րդ ԷջԵԸ

իրավիճակին, ինչպէս նաեւ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին մասնակցելու Ռուսիոյ պատրաստակամութեան մասին:

Ան նաեւ յայտնեց, որ Հարիւրի Մոսկուա այցելութիւնը քննարկումի նիւթ է, բայց ցարդ թուական չէ ճշգրտած:

Հարիւրի նաեւ տեսակցեցաւ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Բուրթիէի եւ Չինաստանի դեսպան Լիու Ժէն Թանկի հետ: Վերջինը յայտնեց, թէ Հարիւրի փոխանցած է իր կառավարութեան պատգամ մը ի պատասխան Հարիւրի Չինաստանի նախագահին ուղղուած պատգամին:

Ան վերահաստատեց, թէ Չինաստան դէմ է ահաբեկչութեան եւ միջին արեւելեան տագնապին առնչութեամբ իր կեցուածքը կը նմանի Լիբանանի կեցուածքին:

Հարիւրի նաեւ ընդունեց պաշտպանութեան նախարար Նալի Հըրաուին:


ՇԱՐՇԵՔԷ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Win up to
\$15,000 in prizes

- Peugeot 206
- Trip to Cyprus for 2 persons (6 nights)
- 2 FUJITSU air condition
- 2 General Electric washing machine
- Sony HI FI DX5
- Philips DVD 711 with zoom
- Panasonic TV 21 inch
- Sony TV 21 inch
- Continental oven



- Peugeot 206 ինքնաշարժ մը
- 2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
- 2FUJITSU էր քոնտիսիոնէ
- 2 General Electric լուացքի մեքենայ
- Sony հայ ֆայ Dx5
- Philips DVD 711 զուռով
- Panasonic հեռատեսիլ 21 ինչ
- Sony հեռատեսիլ 21 ինչ
- Ըոնթինենթալ փուռ



ՆԻՒ ԵՈՐՔԻ ԵՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԱՀԱՔԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐ

ՊՈՒՇ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԴԷՊԻ ԾՈՒՂԱԿ

Հակահարուած տալը ծուղակ է: Այն պահուն, երբ աշխարհը ըմբռնած պէտք էր ըլլար, թէ կարգ ու կանոնը գերադաս են վրէժխնդրութեանէն, ըստ երեւոյթին նախագահ Պուշ կ'ուզողուի ղէպի այն աղէտը, զոր Ուսամա Պըն Լատէնը պատրաստած է իրեն համար: Երբեք կասկած չունենանք անցեալ չարաթ Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ պատահածին առնչութեամբ. ատիկա մարդկութեան ղէմ գործուած ոճիր էր: Չենք կրնար հասկնալ Ամերիկայի հակադարձեւում կարիքը, եթէ չընդունինք այս դաժան, հարկուտ իրողութիւնը: Սակայն ինչպէս հետզհետէ կը յստականայ, այս ոճիրը գործուած էր Միացեալ Նահանգները մղելու համար կոյր եւ ամբարտաւան հակահարուածի մը, որ արդէն իսկ կը պատրաստուի ամերիկեան գինուորական ուժին կողմէ:

Պըն. Պըն Լատէնը, որուն յանցագործ ըլլալը օրըստօրէ կը չեչտուի, ինծի բսած է, թէ ինչպէս կ'ուզէ տապալել Միջին Արեւելքի ամերիկամէտ վարչակարգերը, սկսելով Մէնտալեան Արարիայէն, հասնելով Եգիպտոս, Յորդանան եւ Մոցի այլ երկիրներ: Փտածութեան մէջ միբճուած արարական աշխարհի մենատիրական երկիրներուն մէջ, ուր ղեկավարներու մեծամասնութիւնը կը վայելէ Արեւմուտքի գօրակցութիւնը, միակէն իրենց արեւմտեան իսլամները մղել իրենց ղեկավարները հարուածելու, Միացեալ Նահանգներու կողմէ վաշրպ եւ կոյր յարձակում մը կրնայ ըլլալ: Պըն. Պըն Լատէնը արտաքին յարաբերութիւններու իմաստով հմտութեան չունի, սակայն լաւատեղեակ է պատերազմի արուեստին եւ արհաւիրքին: Ան գիտցաւ ինչպէս պայքարիլ ռուսերուն ղէմ, որոնք մնացին Աֆղանիստան եւ դարձան ճնշէ մը, որ իր վրէժը լուծեց իր թերութեւ քայքայ հակառակորդներէն մինչեւ, որ ի դիմաց անվերջ պատերազմի, ամբողջ Խորհրդային Միութիւնը սկսաւ քայքայուիլ:

Չեչնները սորվեցան այս դասը: Եւ այն մարդը, որ պատասխանատու է Չեչենիոյ արեան փոփերու համար, «Քու. Կէ» Պէ. Պէ. անդամը, որուն րանակը կը բռնաբարէ եւ կը կոտորէ Չեչենիոյ պատասմը իսլամ բնակչութիւնը, այսօր կը գինուորագրուի պըն. Պուշի «ժողովուրդին ղէմ պատերազմ»ին: Վլատիմիր Փուշկինը վստահարար սրամիտ անձ պէտք է ըլլայ՝ գնահատելու համար այլեւս անցեալին պատկանող ճակատագրի անգութ խաղերը: Այսուհանդերձ կը կասկածիմ, որ ան պըն. Պուշին պիտի տեղեկացնէ, թէ ի՞նչ կը պատահի երբ հակահարուածը պատերազմը սկսիս. բանակը, ինչպէս Չեչենիոյ մէջ ռուսական ուժերու պարագային, պատերազմի կը բռնուի թշնամիի մը հետ, որ հետզհետէ աւելի եւ աւելի անխիղճ ու չար կ'երեւայ:

Սակայն հասկնալու համար հակահարուածի պատերազմի տնիմատ ըլլալը, ամերիկացիները կարիքը չունին պաղեստինցիներու ղէմ Շարոնի անհեթեթ պատերազմէն անդին նայելու: Լիբանանի մէջ եւս միշտ նոյնն էր պարագան: Հրգպալայի գինեալ մը կը սպաննէր իսրայէլացի ներխուժող զինուոր մը, եւ իսրայէլացիները կը հակադարձէին կրակ բանալով գիւղի մը ուղղուած: Թեմ, ուր կը սպաննուէր քաղաքային մը: Հրգպալայն այս անգամ «Քալիլու շա» հրթիռ մը կ'արձակէր Իսրայէլի սահմանէն անդին գտնուող չրջանի մը վրայ, իսկ Իսրայէլ կը պատասխանէր ռմրակոծելով հարանալին Լիբանանը: Վերջաւորութեան, Հրգպալայն, ըստ պըն. Շարոնի՝ «աշխարհի հարեկչութեան կեդրոն»ը, իսրայէլացիները դուրս գրաւ Լիբանանէն:

Նոյն պատմութիւնը կը կրկնուի Իսրայէլի եւ Պաղեստինի մէջ՝ իսրայէլացի զինուոր մը կը սպաննէ քարկոծող պաղեստինցի մը: Պաղեստինցիները կը հակադարձեն սպաննելով վերանակեցուած հեռայն Իսրայէլացիները ապա կը գործուողղեն ահարեկչական յատուկ խմբակ մը՝ սպաննելու համար պաղեստինցի գինեալ մը: Պաղեստինցիները այս անգամ կը պատասխանեն անձնատանական ռմրահարող մը ճաշարանի մը ղէմ դրկելով: Իսրայէլացիները «Էֆ. 16» օդանաւերով կը ռմրակոծեն պաղեստինեան ոստիկանութեան կեդրոններ: Հակադարձութիւնը կը տանի նոր հակադարձութեան անվերջ պատերազմ:

Եւ մինչ պըն. Պուշը, թերեւս նաեւ պըն. Պէլը, կը պատրաստեն իրենց ուժերը, անոնք ձեւական րացատրութեամբ կ'ըսեն, թէ ասիկա պատերազմ մըն է «ժողովուրդավարութեան» եւ «գաղութեան» համար, ընդդէմ մարդոց, որոնք «քաղաքակրթութեան ղէմ յարձակում կը գործեն»: Պըն. Պուշ Ուրաթ օր (13 Սեպտեմբեր) ըսաւ՝ «Ամերիկան իբրեւ թիրախ ընտրուած էր, որովհետեւ մենք ազատութեան եւ հաւասար առիթներու համար ամէնէն փայլուն ջահն ենք»: Սակայն ասոր համար չէ, որ

Ամերիկան յարձակումի ենթարկուեցաւ: Եթէ ասիկա արար-իրայէլեան արարք մըն էր, ապա ան անմիջականօրէն կ'առնչուի Միջին Արեւելքի ղէպերուն եւ չրջանի մէջ Ամերիկայի դերակատարութեան: Կարելի է աւելցնել, որ արարները շատ պիտի ուզէին բաժին ունենալ պըն. Պուշի ակնարկած ազատութեան եւ ժողովրդավարութեան: Փոխարէնը, անոնք ունին նախագահ, որ ընտրութեան կը չափի քուէներուն 98 աւ հարիւրը (Ուաշինկթընի բարեկամը՝ պըն. Մուպարաթ), եւ կամ «Սլ. Ալ. Էլ. ի» կողմէ մարգուած պաղեստինեան ոստիկանութիւն մը, որ րանտերու մէջ կը չարչարէ եւ երբեմն կը սպաննէ իր ազգակիցները: Սուրիացիներն ալ պիտի ուզէին այդ ժողովրդավարութեան լաժն մը ունենալ, նաեւ՝ սէնտցիները: Սակայն անոնց մեղի իշխանները բոլորն ալ Ամերիկայի բարեկամներն են, անոնցմէ շատերը Միացեալ Նահանգներու համալսարաններուն մէջ ուսանած են:

Միշտ պիտի յիշեմ, թէ ինչպէս նախագահ Քլինթըն յայտարարեց, որ Սատտամ Հիւսէյն (մեր մէջ այլ ալադակ ստեղծագործութիւնը) պէտք է տապալի, որպէսզի Իրաքի ժողովուրդը կարենայ ընտրել իր ղեկավարները: Սակայն ասիկա եթէ իրականանար, միջին արեւելեան պատմութեան մէջ աննախընթաց պարագայ պիտի ըլլար: Ո՛չ, «մեր» ժողովրդավարութեան եւ «մեր» ազատութեան մասին է, որ պըն. Պուշը եւ պըն. Պէլը կը խօսին, մեր արեւմտեան աշխարհէն, որ յարձակումի տակ է եւ ոչ թէ Միջին Արեւելքը, որ արհաւիրքի եւ անարդարութեան թիրախ դարձած է:

Օրինակով բացատրեմ. տասնինը տարի առաջ՝ այսօր, սկսաւ Միջին Արեւելքի արդի պատմութեան մէջ հարեկչութեան (այս յաճախ սխալ գործածուող եզրին իսրայէլեան հակացողութեամբ) ամէնէն ուշագրաւ գործողութիւնը: Արեւմուտքի մէջ ունէ մէկ-կը կը յիշէ՝ ղէպերն տարեկարձը: Այս յօդածը կարդացողներէն քանի հօգի կը յիշէ: Կը համարձակիմ ըսել, որ բրիտանական ոչ մէկ այլ թերթ, եւ վստահարար ամերիկեան ոչ մէկ թերթ այսօր պիտի չէ, թէ 16 Սեպտեմբեր 1982ին իսրայէլի պաշտպանը, պաղեստին միլիտներ Սապարի եւ Շաթիլայի պաղեստինեան զաղթականներուն մէջ երեք օրերու ընթացքին բռնաբարեցին, մորթեցին եւ սպաննեցին 1800 հօգի: Այս ղէպերը յաջողեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Ալեքսանտր Հէյկի կանաչ լոյսով Իսրայէլի Լիբանան ներխուժման, որ կը նպատակադէր երկրէն դուրս քշել Պաղեստինեան Ազատագրութեան կազմակերպութիւնը, եւ որ իսկ 17,500 իբրանացիներու եւ պաղեստինցիներու կեանքը՝ մեծամասնութեամբ քաղաքայիններ: Այս թիւը եռապատկն է «Ուրլաթ թրէյտ Մէնթըր»ի մէջ մահացածներու թիւին: Սակայն տակաւին չեմ յիշեր Լիբանանի անմեղ գոհերուն համար Ամերիկայի կամ Արեւմուտքի մէջ որեւէ հսկում, յիշատակի արարողութիւն կամ մոմավառութիւն: Չեմ յիշեր ժողովրդավարութեան եւ ազատութեան մասին զգայացուցող որեւէ ճառ: Իրականութեան մէջ, կը յիշեմ, որ Միացեալ Նահանգներ 1982ի Յուլիս եւ Օգոստոս արիւնոտ ամիսները անցուցին «զսպուածութեան» կոչեր ընելով:

Ոչ, Իսրայէլը պէտք է ամբաստանել անցեալ շարժման ղէպերն համար: Յանցագործները արարներ էին, եւ ոչ իսրայէլացիներ: Սակայն, Միջին Արեւելքի մէջ Ամերիկայի պատիւով չգործելը, իր հրթիռներու անտանձ վաճառքը անոնց, որ գանոնք կը գործածեն քաղաքային թիրախներու ղէմ, Իսահոգ անտեսումը մահաւան տառնեակ հագարաւոր իրաքի երեխաներու, որոնք ենթակայ են զլիաւորաբար Ուաշինկթընի գորակութիւնը վայելող պատժամիջոցներու, այս բոլորը անմիջականօրէն կ'առնչուին այն ընկերութեան, որ ծնաւ այն արարները, որոնք անցեալ շարաթ Ամերիկան դժոխային կրակի մէջ նետեցին:

Ամերիկայի անուր ռազմական ղրոշմուած է Իսրայէլի կողմէ Կապալի եւ Այսրլորդանանի պաղեստինեան չէնքերուն վրայ արձակուող հրթիռներուն վրայ: Տակաւին չորս շարաթ առաջ հաստատեցին, որ արձակուած հրթիռներէն մէկը «Էլ. ձի. Էմ. 114Տ» օդ-ցամաք հրթիռ մըն է, պատրաստուած «Պոլիսկի» եւ «Լոքիւտ - Մարքի» ընկերութիւններուն կողմէ, Ֆլորիդայի անոնց գործարանին մէջ, այն նահանգը՝ ուր անձնապահանական հարեկչներէն ոմանք օդանաւ վարել սորված էին:

1982ին, Իսրայէլի Լիբանան ներխուժման ժամանակ «Ա.փալի» (ամերիկեան պատրաստութիւն՝ անշուշտ) ռազմաթիւ իւրէն, որ հակառակ Իսրայէլի Միացեալ Նահանգներուն տուած հաւաստիքներուն, հարկուաւոր «Քլապըր» ռուսերը արձակեց Պէյրութի քաղաքային չրջաններուն վրայ: Թուժ-

բերուն մեծամասնութիւնը կը կրէին Միացեալ Նահանգներու ծովուժին մակնիշը. Միացեալ Նահանգներ առկախեցին կարգ մը յարձակող ռմրակոծիչներու Իսրայէլ առաքումը՝ առկախումը տեւեց երկու ամիսէն պակաս:

Նոյն տեսակի հրթիռ մը, այս անգամ Ճորճիայի մէջ պատրաստուած «Էլ. ձի. Էմ. 114 Սլ», լիբանանեան Մանսուրի գիւղին մօտ հարուածած էր հիւանդատար կառք մը, սպաննելով երկու կին եւ չորս երեխայ: Ես ինքս հաւաքեցի հրթիռին բեկորները, նաեւ անոր համակարգչային սարքը, տարի պահուեց Ճորճիա եւ ներկայացուցի «Պոլիսկի» գործարանի պատասխանատուներուն: Եւ ինչ ըսաւ հրթիռը պատրաստողը, երբ ցոյց տուի իր հրթիռին սպաննած երեխաներուն պատկերները՝ «Ինչ կ'ուզես ըրէ, րայց երբեք ինծի իբրեւ Իսրայէլի քաղաքականութիւնը քննադատող չներկայացնես»:

Վստահ եմ, որ սպաննուած երեխաներուն հայրը, որ կը վարէր հիւանդատար կառքը, ցնցուած էր անցեալ շարժման ղէպերէն, սակայն նկատի ունենալով հիւանդատար կառքին մէջ սպաննուած իր կնոջ պարագան, չեմ կարծեր, որ ան ունէ մէկուն ցաւակցագիրներ յղելու տրամադրութեան մէջ ըլլալ: Անշուշտ այս բոլորը հիմա պէտք է մոռցուին:

Ցաւալիկայ օրերուն ճիգ պիտի չխնայուի «Ինչու» մոռացութեան մատնելու եւ «Ո՛վ», «Ի՛նչ» եւ «Ի՛նչպէս»ին վրայ կեդրոնանալու: «Սլ. Էմ. Էմ.»-ը եւ համաշխարհային լրատուամիջոցներու մեծամասնութիւնը արդէն իսկ կ'ենթարկուի այս նոր պատերազմի կարեւոր օրէնքին: Արդէն տեսալ, թէ ինչ կը պատահի երբ ոստիկանութիւնը այս օրէնքը: Երբ «Ինտիփեմուր»ը հրապարակեց յօդուածս, որ կ'առնուէր Միջին Արեւելքի մէջ գործադրուող անարդարութեան եւ Նիւ Եորքի աղէտին կապակցութեան, «Պի. Պի. Սլ.» լուրերու միջազգային կայանը ներկայացուց ամերիկացի մեկնաբան մը, որ նշեց, թէ «Ինտրթի Ֆիսք շահած է գէշ վարձուէրի մրցանակը»: Երբ նոյն հարցին անդրադարձալ իրլանտական ռատիոկայանին մէկ գրողին ընթացքին, գրողացիդս՝ Հարուէրտ համալսարանէն իրաւաբան մը, գիտ իբրեւ ստախօս, կեղծաւոր, «վտանգաւոր մարդ» եւ անշուշտ՝ հաւանական հակասեմական որակեց: Իրականացի հաղորդավարը անոր դասը տուաւ:

Պէտք է զարմանալ, որ կ'ըսուի, թէ ահաբեկիչները «անխելք» պէտք է կոչենք: Որովհետեւ եթէ այդպէս չընենք, ստիպուած պիտի ըլլանք բացատրելու, թէ ի՞նչ կը դառնար անոնց մտքին մէջ: Սակայն պէտք է արտօնել արդէն իսկ սկսած այս պատերազմին իրողութիւնները զրաքննութեան անցնելու փորձը: Մօտենանք հարցին տրամաբանօրէն: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ Ուրաթ օր կը չեչտէր, թէ Թալպանի ուղղած իր պատգամը յստակ էր. «Չէք կրնար ձեր գործունէութիւնը անշատել ահաբեկիչներու գործունէութեան»: Սակայն ամերիկացիները կտրականօրէն կը մերժեն իրենց հակադարձութիւնը առնել Միջին Արեւելքի մէջ իրենց գործունէութեան: Մեզմէ կը պահանջուի լուել նոյնիսկ երբ Արիէլ Շարոն, մարդ մը, որուն անունը միշտ առնչուած պիտի մնայ Սապարայի եւ Շաթիլայի ջարդերուն, կը յայտարարէ, թէ Իսրայէլն ալ կ'ուզէ մասնակցիլ «համաշխարհային ահաբեկչութեան» ղէմ պատերազմին:

Կասկած չկայ, որ պաղեստինցիները սարսափահար եղած են: Անցնող չորս օրուան ընթացքին 23 պաղեստինցիներ սպաննուած են կապալի եւ Այսրլորդանանի մէջ՝ ցնցիլ թիւ մը, որ թերթերու առաջին էջը պիտի գրաւէր, եթէ Ամերիկա յարձակումի ենթարկուած էր: Եթէ Իսրայէլ գինուորագրութիւնն այս նոր հակամարտութեան պաղեստինցիները, որոնք կը պայքարին Իսրայէլի ղէմ, անուղղակիօրէն մաս պիտի կազմեն այն «համաշխարհային ահաբեկչութեան», որուն ղէմ ուղղուած է պըն. Պուշի պատերազմը: Ի պուր չէ, որ պըն. Շարոն յայտարարեց, թէ Եասէր Արաֆաթը կապեր ունի Ուսամա Պըն Լատէնի հետ:

Կր կրկնեմ. ինչ որ պատահեցաւ Նիւ Եորքի մէջ մարդկութեան ղէմ գործուած ոճիր մըն էր: Այս կը նշանակէ, թէ անհրաժեշտ են ոստիկաններ, ձերբակալութիւններ, արդարութիւն, եւ ի հարկին՝ նոյնիսկ Լա Հէյլի մէջ միջազգային նոր դատարանի մը հիմնումը եւ ոչ թէ՝ հրթիռներ, «ճշգրիտ» ռուսերը եւ արեւմուտքի գոհերուն իբրեւ փոխվրէժ իսլամ գոհեր: Սակայն ծուղակ լարուած է, պըն. Պուշը եւ թերեւս մենք բոլորս հիմա կը քալենք ղէպի այդ ուղղութեամբ:

ՌՈՊԸԸԸ ՖԻՍԲ

«Տի. Ինտիփեմուր»


ԻՆՉՊԴԻՍ ՓՈՒԼ ԵԿԱԻ «ՈՒԸՐԼՏ ԹՐԷՅՏ ՍԵՆԹԸՐ»Ը

«Ուրլաթ թրէյտ Սենթըր»ի շինութիւնը սկսած է 1960ական թուականներուն: Շինութեան կեդրոնը կազմուած է պեթոնով ծածկուած ուղղահայեաց պողպատէ: Շէնքին յարկերը եւս պեթոնէ շինուած են: Շէնքը ունեցած է բաւական ամուր հիմեր՝ փոթորիկներու ճնշումներուն դիմանալու համար:

Մասնագէտներու համաձայն, այս երկու շէնքերը բացառիկ եղած են, որովհետեւ նորաշէն երկնեփոնի, հարկերներով մահացած հրշէջներն ու տուրթեան մէջ աւելի հոն ըլլային: «Կը կարծեմ, որ անոնք բնաւ ներս


րը սկսած են փուլ գալ մէկը միւսին վրայ եւ մօտաւորապէս մէկ ժամուան մէջ 104 յարկանի երկնաքերները գետնին հաւասարած են: Երկրահափ Քրիս Ուայզ ըսաւ՝ «Հրդեհէն էր, որ կործանեց շէնքերը. աշխարհի մէջ ոչինչ կրնար դիմադրել այսպիսի աստիճաններու ալոյղ քարկղին»:

Օդանաւերուն բախումէն անմիջապէս ետք արդէն յստակ դարձած է, որ շէնքերը ամբողջովին փուլ պիտի գան եւ ըստ Նիւքսթըլ համարտմանի երկրաշարժութեան մասնագէտ փրոֆ. Ճոն Որովհետեւ նորաշէն երկնեփոնի, հարկերներով մահացած հրշէջներն ու տուրթեան մէջ աւելի հոն ըլլային: «Կը կարծեմ, որ անոնք բնաւ ներս



Երկրաշարժներ ըսին, թէ «Ուրլաթ թրէյտ Սենթըր»ը փրկած է հազարաւորներու կեանքը, որովհետեւ օդանաւային բախումներէն մօտաւորապէս ժամ մը ետք է, որ

պէտք է մտնէին: Սակայն եթէ իրենք որոշած էին առնել այդ ուղղութեամբ, մէկ ժամէն պէտք է քաշուած ըլլային», ըսաւ Նեփթոն: Սակայն, միւս կողմէ, ան նշեց թէ կա-



«Ուրլաթ թրէյտ Սենթըր»ը քանդուեց առաջ...



Եւ ետք

դութեան ստեղծած ահաբեկութիւնն ու վախը իրաւանցումի մատնած են փրկարար աշխատանքներով զրաղուած պատասխանատուները, որոնք պէտք եղած հրամանները չեն կրցած տալ հրշէջներուն եւ ոստիկաններուն: «Կը կարծեմ, որ ո՛չ ոք կը մտածէր՝ պատահածը սարսափազող ու շարժապատկերի մը պէս էր, եւ կը կարծեմ, որ մարդիկ կորսնցուցած էին իրենց արամարանութիւնը, աւելցուց փրոֆ. Նեփթոն:

«Պի. Պի. Սի.»ի ՀԱՄԼՏԱՆՑԻ ԿԱՅԲ

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ

HAMPIG SASSOUNIAN

CSP - L.A.C. B - 5 - 131 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան «Քոնկրէսի հայկական հարցերու խմբակցութեան համանախագահներ Մօ Քոլորնպերկի եւ Ֆրէնք Փալոնի ուղղումը մասնակի մը մէջ իր ցաւակցութիւնները յայտնելով Միացեալ Նահանգներուն, ըսած է.

«Միացեալ Նահանգները ահաբեկչութեան դէմ արշաւին մէջ կրճաւ վստահութիւն ունենալ Հայաստանի համաձայնութեան եւ յստակ գործակցութեան վրայ»: Օսկանեան շարունակած է, թէ Հայաստան լիովին կը զօրակցի «Միացեալ Նահանգներու կառավարութեան եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ աշխարհի քաղաքակրթութեան ժողովուրդներուն այսպիսի զգուշելի միջոցներու օգտագործման վերջ դնելու»:

Հաղորդագրութիւնը նաեւ կը յիշէ, թէ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան իր կարգին նախագահ Պուշին յայտնած է իր ցաւակցութիւնները եւ աջակցութիւնը՝ ըսելով, որ «Հայաստան կը միանայ աշխարհին՝ այս ողբալի եւ անմարդկային արարքը դատապարտելու»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՄԱՆ ԱԶԵՐԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Ազգերի չորս քաղաքագէտներ՝ Ազգային Անկախութիւն» կուսակցութեան ղեկավար Նազիմ Իմանով, Ազրպէյճանի նախագահի աշխատակազմի նախկին պետ Էլտար Նամազով, արտաքին գործոց նախկին նախարար Թոֆիկ Չուլֆիբարով եւ քարիւղի պետական ընկերութեան (ՍՈՔԱՐ) նախկին տնօրէն Սապիթ Պաղիբով վերջերս հրատարակած են Լեռնային Ղարաբաղի լուծման նախագիծ մը:

Քառեակը, որ ազերիական լրատուամիջոցներուն կողմէ «Չորս» ի խմբակ կ'անուանին, իր հրատարակած նախագիծին մէջ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հետեւեալ 3 հիմնական սկզբունքները բանաձեւած է.

- 1.- «Բռնագրաւուած տարածքներու ազատագրում»:
 - 2.- Ազրպէյճանի հողային ամբողջականութեան վերահաստատում:
 - 3.- «Տեղափոխուած» ազերիներու տունդարձ:
- «Չորս» ի խմբակը հանդիպում ունեցած է վերջերս Պաքո լայնելով «Հէյսինքեան նախաձեռնութիւն» քաղաքականական ընկերակցութեան հայկական պատուիրակութեան հետ: Ազերի քաղաքագէտները հայկական պատուիրակութեան յայտնած են, թէ միայն վերոնշեալ նախապայմաններու գործադրութեան պարագային Լեռնային Ղարաբաղի կրնայ տուել ինքնակառավարման կարգավիճակ, որ չի հակադրու Ազրպէյճանի գերիշխանութեան: Անոնք նաեւ նշած են, թէ Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ տնտեսական համագործակցութեան ստեղծումը կարելի չէ, եւ թէ Ազրպէյճան պատրաստ է ուղղակիօրէն բանակցելու Լեռնային Ղարաբաղի հետ, եթէ այս վերջինը կասեցնէ Հայաստանին իր նիւթական կախեալութիւնը եւ «Հայաստանին պահանջէ իր գործերը հեռացնել Լեռնային Ղարաբաղէն»: Ըստ ազերիներուն, եւեթի քան 600 կազմակերպութիւններու ստորաբաժան են նախագիծին տակ. ձեռնպահ մնացած են կառավարութեան համակիր կազմակերպութիւնները:

Ազրպէյճանական «Ջերբալ» թերթը «Մինսքի խմբակի համախաղաղահանքը կը դատապարտեն նախագիծը՝ խորապիւրջ կրող յօդուածով մը անդրադարձաւ «Չորս» ի նախաձեռնութեան: Ըստ «Ջերբալ»-ին, համախաղաղահանքը կը փորձեն արժեզրկել թէ՛ նախագիծը եւ թէ անոր հեղինակները՝ պատճառաւորելով, թէ՛ «նախագիծը կրնայ յանգիլ կա'մ վայրագութիւններու վերակսման եւ կամ տագնապի լուծման սառեցումին»:

«Ջերբալ»-ը կ'ըսէ, թէ Մինսքի խմբակին նախագահող երկիրները տեղեկատուական պատերազմ մը սկսած են «Չորս» ի նախագիծին դէմ: Արեւի յայտարարութիւններէն հետեւութիւններ կատարելով՝ «Ջերբալ»-ը կ'ըսէ, թէ Մինսքի խմբակը Ազրպէյճանին պիտի ստիպէ ստորագրել համաձայնագիր մը, որ ի նպաստ Հայաստանին է:

«Չորս» ի նախագիծին անդրադարձած է նաեւ ազրպէյճանական «Ելսո» թերթը: «Ելսո» փորձած է բաղդատական մը կատարել նախագիծին եւ 2001-ի զարնան որդեգրուած «Հայաստանի խորհրդարանական յայտարարութեան» միջեւ: «Ելսո» կ'ըսէ, թէ նախագիծը կը շեշտէ տագնապը Ազրպէյճանի հողային ամբողջականութեան հիման վրայ լուծելու անհրաժեշտութիւնը, մինչ «խորհրդարանական յայտարարութիւնը» իրենք մեկնակէտ կը նշէ ժողովուրդներու ազատ ինքնորոշման իրաւունքը: Թերթը նաեւ կը ներկայացնէ երկու կողմերու մօտեցումներուն միջեւ այլ հակադրութիւններ՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին, պատերազմի հասկացողութեան եւ տագնապին առնչուող այլ հարցերու մասին: «Ելսո» նաեւ կը վկայակոչէ նախագիծին այն առաջադրանքը, թէ Ազրպէյճանի ղերբորոշումը պէտք է հիմնուած ըլլայ թէ՛ քաղաքական եւ թէ ռազմական ճնշումի վրայ, եւ թէ ռազմական միջոցները պէտք է արդարացուած, կազմակերպուած եւ վճռական ըլլան տարածքներու «ազատագրման»՝ մարդասիրական գործողութեան» մը պիտակին տակ:

ԹԱՆԷՐ ԱՔԶԱՄ ԿԸ ԽՕՄԻ «ՀԱՅ - ԹՐԲԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»ԻՆ ՄԱՍԻՆ

Ստորեւ անգլերէնէ թարգմանաբար կու տանք թուրք ծանօթ մտաւորական Թամըր Աքշամի մէկ յօդուածը, որ հրապարակուած է «*Կռուկ*» լրատու գործակալութեան «Հայ - Թրքական Հաշտութեան յանձնաժողով» յատկացուած բաժնին մէջ: Յօդուածը գրուած է «Չօրեան» հիմնարկին յանձնարարութեամբ եւ կը ներկայացնէ «Հայ - Թրքական հաշտութեան յանձնաժողով»-ը, դիտուած՝ թրքական ընկերութեան պրիսմակէն:

Աքշամի վերլուծականը, հակառակ ցեղասպանութեան հարցին մասին երեւութապէս դրական մօտեցումին, տեղ կու տայ որոշ վերապահութիւններու:

Յօդուածին մէջ տեղ գտած են կարգ մը հակասական եւ առարկելի նշումներ: Այսպէս, օրինակ, Աքշամ երկխոսութեան միակ նախապայման կը նկատէ «լսելու պատրաստակամութիւնը» մինչդեռ պէտք չէ սակարկել Հայկական Յեղասպանութեան ձշմարտութիւնը եւ, հետեւաբար, ցեղասպանութեան ձանաչումը պէտք է ըլլայ հայ-թրքական որեւէ երկխոսութեան նախապայման:

Աքշամ կ'ըսէ նաեւ, թէ հարկ է ժամանակ տալ յանձնաժողովին, որովհետեւ կարելի չէ մէկ օրէն միւսը փոփոխութիւն ակնկալել: Միւս կողմէ, ան կ'ընդունի, որ թրքական պետութիւնը յետիմ նպատակներ կը հետապնդէ եւ պարզ է, որ Թուրքիա յանձնաժողովին ցնցով կանգնած է ժամանակ շահելու եւ հարցը քաշքշելու համար. եւ ոչ թէ՝ ժամանակի ընթացքին հայ-թրքական հակամարտութեան արդար լուծում մը գտնելու:

Առաջին ակնարկով, Յուլիս 10-ին «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի կազմութեան լուրը դրական քայլ մըն է, գոր բոլորը պէտք է ողջունեն: Յանձնաժողովը կարելի է նկատել յաղթանակ մը այն շրջանակներուն համար, որոնք անտեսելով իրենց դիմագրաւելիք դժուարութիւնները՝ երկարատեւ ի վեր կը ձգտին հայ - Թրքական երկխոսութիւն ստեղծել: Բոլոր անոնց համար, որոնք ծանօթ չեն այս ենթահողին, պարզապէս յայտնեմ, որ անցնող տարին յատկանշուած է շարք մը անհատներու եւ կազմակերպութիւններու կողմէ հայ - Թրքական երկխոսութիւն յառաւ մղելու ճիգերով, որոնք Թուրքիոյ կողմէ խիստ հակադարձութեան հանդիպած են: Եւ որովհետեւ ժընեւի մէջ կատարուած յայտարարութիւնը կը վայելէր թուրք պետութեան լուրեւան գորակցութիւնը՝ Հայկական Հարմար Նկատումը Թուրքիոյ քաղաքականութիւնը, ինչպէս պիտի բացատրուի ստորեւ, հիմնական փոփոխութեան ենթարկուած է: Այս քաղաքականութիւնը կարելի է հետեւեալ ձեւով ամփոփել: «Այսօր Հայկական Հարց գոյութիւն չունի, իսկ «Եթէ նման բան գոյութիւն ունի, ապա այդ մէկը նոյնիման հայերու յանձնարարութեան»:

Թրքական Հանրապետութեան հիմնադրութեան մինչեւ օրս պետութեան քաղաքականութիւնը ինքզինքն արտայայտած է հայերու հետ խնդիր քննարկելու հետեւողական մերժումով եւ որեւէ նման հարցի զոյլութեան ուրացումով: Կը թուի թէ այժմ Թրքական պետութիւնը լուրեւան կ'ընդունի, թէ իր քաղաքականութիւնը փոխուած է: Այս իմաստով յանձնաժողովին կազմութիւնը հայ - Թրքական հակամարտութեան պատմութեան անխնայադարձային պահ է: Այս հաստատումը ճիշդ է յատկապէս, երբ նկատի կ'ունենանք Թուրքիոյ մէջ այժմ ընթացի մէջ եղող զարգացումները, պատմութեան հետ անկեղծօրէն չփոխելու, եւ երբ նկատի կ'ունենանք մէկ կողմէ ժողովուրդավարականացումի գարդացումը եւ, միւս կողմէ, ժողովուրդավարութեան շատագոյններու վրայ յարձակումները: Այստեղ, նման յանձնաժողովի մը գոյութեան կողմնակի ազդեցութիւնները աւելի կարեւոր են, քան՝ նոյնինքն յանձնաժողովին կազմութեան նախաձեռնութիւնը: Թէ ինչո՞ւ Թուրքիա հրաժարած է իր քաղաքական հին ուղիէն, կարեւոր է, սակայն ան կը կարօտի յատուկ քննարկութիւն:

Գոյութիւն ունին երեք տարբեր կողմեր, որոնց շնորհիւ իրադրութեանցաւ այս նուաճումը: Առաջինը Սիյեքալ Նահանգներն են, որոնք աշխարհաքաղաքական, տնտեսական եւ ռազմական նկատառումներով կ'ուզեն օգնել Թուրքիոյ: Երկրորդ կողմը Հայկական Սփիւռնն է որ յամառօրէն պայքարեցաւ ի խնդիր աշխարհի եւ յատկապէս Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ձանաչումին: Եւրոպական տարբեր պետութիւններու կողմէ վերջերս կատարուած անակնկալ ճանաչումները քաջաբերեցին անցնող տասնամեակներուն հարցը օրակարգի վրայ պահելու համար պայքարող Սփիւռնը եւ յառաւ մղեցին Հայկական Յեղասպանութեան ձանաչումը ապահովելու լուրջ ծրարութիւնները: Երկրորդ կողմը, թէ եւ հաւանաբար այս պահու քաղաքական առումով տկար է, սակայն ի վերջոյ, փոփոխութեան ուժեղագոյն ազդակն է Թրքական պետութեան մէջ, որովհետեւ այս կողմը, որ կը հանդիսանայ Թուրքիոյ մէջ ժողովրդավարականացումի ետին գտնուող ուժը, բաղկացած է, Թուրքիոյ մէջ եւ անկէ դուրս գտնուող քաղաքային - քաղաքական խմբաւորումներէ, որոնք տարիներէ ի վեր կը պայքարէին հայերու եւ Թուրքերու միջեւ երկխոսութեան ստեղծումին համար:

Նախքան անդրադառնալ այս յանձնաժողովին վերաբերող կարգ մը կէտերու, որոնք կը թուի, թէ լուրջ պատճառ կրնան ըլլալ մտահոգութեան, կ'ուզեմ շեշտել, որ անկախաբար այս նախաձեռնութեան բնոյթն է, անդրական երկու անդրադարձ պիտի ունենայ Թուրքիոյ մէջ: Նախ՝ «Հայկական Հարց»-ի նկատմամբ սառած եւ կարծի կեցուածքները պիտի հալին, եւ հայ - Թրքական հարցերու մասին բաց է ի բաց խօսելու կարելիութիւնը պիտի աւելնայ: Երկրորդ, եւ իբրեւ արդիւնք առաջին կէտին, չափաւորական շրջանակներու դիրքը պիտի ամրանայ: Այս իմաստով, յանձնաժողովը շատ դրական փորձ մըն է եւ լաւ քայլ մը՝ հայ - Թրքական յարաբերութիւնները անել շրջանակէն դուրս բերելու ճամբուն վրայ:

Սակայն այս յանձնաժողովին կապակցութեամբ գոյութիւն ունին շատ բացայայտ թերութիւններ: Ա) անոր կազմութեան զաղտնիութիւնը, Բ) Թուրք անդամներուն ինքնութիւնը, Գ) Թուրք անդամներու կողմէ գիտակից անտեսումը Թուրքիոյ պատմութեան կարեւորութեան եւ նոյնիսկ անցեալի եւ ներկայի միջեւ հակասութիւն գտնելը:

Նախ եւ առաջ՝ ինչո՞ւ Թուրք պետութիւնը անհրաժեշտ գտած է հայերուն հետ զաղտնօրէն հանդիպել: Ի վերջոյ, անոնք որոնք պիտի հակառակէին (Թուրքիոյ մէջ, «Ա.» նման հանդիպումի մը, մաս կը կազմեն նոյն այդ շրջանակին, որ մասնակցեցաւ ժընեւի հանդիպումին: Ժընեւի հանդիպումին մասնակցողները կը պատկանին նոյն այդ շրջանակին, որ Թրքական մամուլին մէջ երկխօսութեան կոչ կատարող կարգ մը անադիւն մականներու ղեմ վճռակներու որսի մը առաջնորդները հանդիսացած է: Թրքական պետութիւնը ինք տարիներէ ի վեր հայերու հետ երկխոսութեան համար պայքարող Թուրքիոյ քաղաքային խմբաւորումները ճնշած է: Եթէ այս յանձնաժողովին մասնակիցները նոյն շրջանակն են, այդ պարագային ինչո՞ւ զաղտնօրէն կը հանդիպին: Որմէ՞ կը վախնան: Իրենցմէ գատ ոչ մէկը ան հանդիպումի մը պիտի հակառակէր: Ի վերջոյ, բոլոր Թուրք մասնակիցները լաւապէս առնչուած են ղեկավար ընտրանիին ամէնէն սեղմ շրջանակին, որ ինքնին պետութեան մէջ պետութիւն մը դարձած է: Աւելի՛ն. անոնք յայտարարած են, թէ այս յանձնաժողովին իրենց մասնակցութիւնը Թուրք պետութեան գիտակցութեամբ կատարուած է: Անըմբռնելի է, որ մարդ փորձէ ինքզինքն պահուելու: Այս զաղտնիութիւնը որչա՞ր կը թուի կապածելի է, այլեւ կը ստեղծէ ժխտական հետեւանք մը, որովհետեւ կը նուազեցնէ ընկերութեան զօրակցութիւնը եւ կրնայ ցուցանիշ մը ըլլալ, թէ Թրքական պետութեան նպատակը հայերու հետ երկխոսութիւն ստեղծել տարբեր բան մըն է:

Երկրորդ թերութիւնը՝ յանձնաժողովի անդամները նոյնպէս մտահոգիչ են: Անոնցմէ ոմանք ծանօթ են հայ - Թրքական երկխոսութեան նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքով: Օրինակի համար, Կիւնտիւզ Աթթան հանրածանօթ է անցեալ աշնան ամերիկեան Քոնկրէսին մէջ Հայկական Յեղասպանութեան օրինագիծին քննարկման բանալի ճեղքու ընթացքին իր խաղացած դերով: Ան առաջնորդէ իր այն քարոզիչներուն, որոնք բուռն կերպով պայքարեցան ընդդէմ «Հայկական սուտ»ին եւ հայ - Թրքական հակամարտութեան ու յատկապէս Հայկական Յեղասպանութեան հարցը նկատեցին պատերազմ:

Աթթան բացէ ի բաց յայտարարեց, որ հայկական թէգի (ցեղասպանութեան պահանջ) դէմ «պատերազմը» պէտք է ըլլայ Թրքական կառավարութեան մէկ կարեւոր գործը. ան մեծ թիւով յօդուածներ գրեց այս «պատերազմը» մղելու ձեւերուն մասին: Թուրք անդամներէն ոչ մէկը նախապէս

հայ-թրքական երկխոսութեան աշխուժ մասնակից եղած է, որպէսզի որոշ չափով վայելէ Թուրք ընկերութեան փստահութիւնը: Այս մէկը յաւելեալ ցուցանիշ մըն է, որ Թրքական պետութիւնը հայերու հետ երկխոսութեան տարբեր բանի կը ձգտի:

Երրորդ թերութիւնը՝ պատմութեան ստորագրումը, հիմնական է: Թէեւ յանձնաժողովի առաջադրանքները կը հաստատեն, որ ան, ըստ պահանջի, «պատմական, հոգեբանական եւ կրօնական հարցերու մասնագէտներ պիտի լծէ գործի», սակայն կը թուի, թէ Թուրք անդամները ասիկա կը բացատրեն տարօրինակ ձեւով մը:

Օրինակի համար, Էօգտեմ Սանպէրի՝ Բրիտանիոյ մէջ Թուրքիոյ նախկին դեսպանը, ըսաւ. «Նպատակը ճշմարտութիւնը գտնելը չէ, այլ՝ նոր հորիզոններ բանալը ապագայի համար եւ փոխադարձ հասկացողութիւն յառաւ մղելը»: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իլթիթ Թիւրքմէն ըսաւ. «Յանձնաժողովին նպատակը պատմական վճիռի հասնիլը չէ: Երկխոսութեան ընթացքին կը յուսանք, որ յաղթահարենք դժուարութիւնները, սակայն այդ չի նշանակել, որ 85 տարի առաջ կատարուածին ճշգրիտ պատմական պատկերին պիտի կարենանք յանգիլ»: Անոնք մեծ տարբերութիւն մը կը տեսնեն անցեալին եւ ներկային միջեւ: Ուրհեմով, թէ կարելի չէ դիմագրաւել թէ՛ անցեալը, թէ՛ ներկան, անդամները որոշած են հիմնական մէջ ներկայով զբաղիլ: Ասիկա հին մտածելակերպն է եւ կը ներկայացնէ տրամաբանութեան լուրջ թերութիւն մը: Երկխոսութեան ընթացքին հարկ է որ արժարժուի եւ յաղթահարուի այս հարցը: Երկխոսութեան գործընթացը պէտք է բացէ ի բաց եւ բնական կերպով ընդգրկէ պատմութեան արժարժումը իրեն կարեւոր բաժին հաշտութեան գործընթացին: Պատմութիւնը եւ ներկան երեք կարելի չէ իրարմէ անջատել, եւ կարելի չէ մէկը անտեսել միւսին հաշուոյն: Անկարելի է ներկան փրկել պատմութիւնը մոռացումի մատնելով:

Կը թուի, թէ երկխոսութեան տարբեր հասկացողութիւններ մէջտեղ կու գան: Յարգ «Երկխոսութիւն» բառը կը գործածուէր միայն քաղաքային ընկերութեան մէջ: Թրքական պետութիւնը այժմ այս բառը պիտի որդեգրէ եւ գայն պիտի դարձնէ հայ-թրքական յարաբերութիւններու առանցքներէն մէկը: Ասիկա անպայման վատ չէ, սակայն կ'ենթադրենք, որ Թրքական պետութեան ընդունած երկխոսութիւնը առաւել կամ նուազ չափով սակարկութեան գործընթաց մը պիտի ըլլայ: Պետութիւնը նախ պիտի փորձէ պատմութեան վիճարկումին խուսափել, սակայն երբ կարելի չըլլայ այդ մէկը, ան պիտի փորձէ վիճարկումը պահել հակալիւրի տակ:

Ասոր ընթացքին ան պիտի հետեւի երկսայրի քաղաքականութեան մը: Մէկ կողմէ «Հայ-Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»ին խաթը պիտի գործածէ միջազգային ընկերութեան աչքին՝ իր վրայ եղած ճնշումը թեթեւցնելու համար, միւս կողմէ՝ ան քաղաքական ճնշումի գաւազանը պիտի գործածէ Թուրքիոյ մէջ գտնուող այն խմբաւորումներուն դէմ, որոնք կոչ կ'ուղղեն իսկական երկխոսութեան: Թրքական պետութիւնը ամէն ինչ փորձած է այս խմբաւորումները վատարանելու, ահաբեկելու եւ քրէականացնելու համար: Այժմ պետութիւնը կ'ուզէ այս գործընթացը հակակրօնի տակ առնել: Բացայայտ է, որ ան ինչ կ'ուզէ իրագործել: Ան պիտի փորձէ վստահ ըլլալ, թէ պատմութեան եւ յատկապէս ցեղասպանութեան ճանաչման գործընթացը վիճարկումի բնոյթ չի ստանալ: Ան պիտի փորձէ կտրել պատմութեան հետ որեւէ կապ: Պէտք է պատմութիւնը լուսարձակի տակ առնելի, որպէսզի հաշտութիւն գոյանայ:

Ոչ ոք պէտք է անտեսէ այն ճշմարտութիւնը, թէ երկխոսութեան ամէնէն կարեւոր բաժինը պատմութեան մասին բացէ ի բաց խօսելու պատմապատմութիւնն է: Զեմ ուզեր կառուած մնալ «ցեղասպանութիւն» բառին, սակայն բարոյական նուազագոյն չափանիշով իսկ նախապայման է պատմութեան համար հաւաքական ոճի ղատապարտումը: Գիտենք, թէ Թուրք ընկերութիւնը կուրցած է ուրացումի 85ամեայ քաղաքականութեան: Գիտենք այս ճշմարտութիւնը եւ ճիշդ այդ պատճառով է, որ յառաջ մղած ենք երկխոսութեան զաղափարը: 85 տարուան լուրթնէն ետք հայերը եւ Թուրքերը պէտք է իրարու հետ խօսին միայն մէկ նախապայմանով, որ լսելու պատրաստակաւութիւնն է: Ուրիշ ամէն բան (տարբեր մա-

Միտերիկահայ համայնք. հակապոպուլիստներ

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՊՐԵԼՈՒ ՎԷՃԸ

ԱՏԵԼԱԿԱՌ ՈՃԻՐՆԵՐՈՒ ԹԻՐԱՆ ԴԱՌՆԱԼՈՒ ՄՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՂԱԶԱՅԻՆ ԽՈՐՇՈՒՐԴԻ ՀԱՅ ԱՆԴԱՍ ՍԸ ԿԸ ՄԴԵ ԱԲԵԼՈՐԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԱՐԹՆՈՒԹԻՒՆ՝ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը լրատուամիջոցներու կողմէ ճշգրիտ տեղեկութիւններու հրապարակումը աւելի քան անհրաժեշտ կը նկատէ ներկայիս եւ արթնութեան ու զգուշութեան կոչ կ'ուղղէ հայութեան, աշխուրջ ըլլալու եւ թոյլ չտալու, որ ապատեղեկատուութիւնը կամ ժխտական ու սխալ քարոզչութիւնը ձեւաւորեն հանրային կարծիքը կամ կաշկանդեն ամերիկացիներուն դատողութիւնը:

Յանձնախումբը իրեւ օրինակ կը նշէ 18 Սեպտեմբերին Սի. Պի. Էս. կայանին գիշերային լուրերուն ընթացքին Հայաստանի բոլորովին անհիմն յիշատակումը: Սի. Պի. Էս.ի Լոնտոնի թղթակիցը՝ Մարք Ֆիլիփս, «Այս ան սեկմընք» յայտագիրին մէջ Հայաստանը դասած է Միջին Արեւելքի իսլամական ահաբեկչական խմբակները ընդունող երկիրներու շարքին: Անոր ցանկը ընդգրկած է հետեւեալ երկիրներուն եւ խմբակներուն անունները.

«...Իրաք, Պաղեստինի Ազատագրութեան ժողովրդային ծակատ, Պաղեստինի Ազատագրութեան ծակատ եւ Ապու Նիտալի խմբակցութեան բազմաթիւ միաւորները, որոնց շարքին՝ Ֆատիհ - Յեղափոխական Խորհուրդը եւ Սեւ Սեպտեմբեր խմբակը: Իրանի մէջ՝ Սուճահետինը: Սարսափ առթող թունալից ալքոլոհներ կը հասնի մինչեւ Թուրքիա եւ Հայաստան: Եւ ինչպէս յայտնի է՝ Աֆղանիստան ու Պըն Լատէնի «Ալ Գաիտա» խմբաւորումը: Այս բոլորը կը վերաբերին պարզապէս իսլամ արմատական ահաբեկչութեան»:

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը կը շեշտէ, թէ «իսլամ արմատական ահաբեկչութեան» առնչուող երկիրներուն շարքին Հայաստանի նշումը բոլորովին անհիմն է:

Յանձնախումբը կը խնդրէ տեղեկ պահել իրեն Հայաստանի եւ հայութեան վերաբերող որեւէ ապատեղեկատուութեան մասին՝ կցելով անհրաժեշտ տուեալները, ինչպէս՝ օրաթերթի, շաբաթաթերթի, պատկերասփիւռի, ձայնասփիւռի կամ կայքի անուն, թուական եւ ժամ, տեղեկատուի անուն եւ նիւթի նկարագրութիւն: Տեղեկութիւնները կարելի է յղել հետեւեալ հասցէին. ե-նամակ. ancawr@anca.org

ՀՕՄ ԶՕՐԱՇԱՐԺԻ Կ'ԵՆԹԱՐԿԷ ԻՐ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐԸ

«Ուրլտ Թրէյտ Սենթր»-ի եւ Փենթակոնի հանգանակներու առաքելներէն քանի մը ժամ ետք Արեւելեան Միացեալ Նահանգներու ՀՕՄԻ կեդրոնը գործարարութիւնը կ'աւելցնէ իր մասնաճիւղերը, մասնաւորաբար՝ Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի եւ Ուաշինկթընի մէջ, մասնակցելու համար փրկուած թեմերու կողմէ:

Կարմիր Խաչը ՀՕՄԻ տեղեկացուցած է, թէ առաւելարար դրամական նուիրատուութեան կարիքը կայ գոհնու ընտանիքներուն եւ վերապրողներուն օգնելու համար: Արեան նուիրատուութեան պահանջը կրնայ զգացուիլ յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն՝ դրամաներու համար վերապրողները, որոնց մեծ մասը այրուցքներէ կը տառապի եւ բժարանդիր խնամք պէտք է ստանայ:

ՀՕՄԻ յայտարարութիւնը կ'ըսէ. Ամերիկայի Կարմիր Խաչը եւ բարեգործական բազմաթիւ այլ կազմակերպութիւններ անմիջապէս հակազդեցին 7 Դեկտեմբեր 1988ի Հայաստանի աղէտալի երկրաշարժին: Այժմ հերթը մերն է օգնելու: Արեւելեան Միացեալ Նահանգներու ՀՕՄը կոչ կ'ուղղէ հայ համայնքի պէս հրճուած են, երբ ոստիկանութիւնը երեք օրուային ընդմիջումէ հետք չգտնէր, որոնք առանց առարկութեան վերադարձուցած են Արգարեանի դրոշակը: Այժմ անիկա դարձեալ կը ծածանի անոնց բնակարանին տանիքը...:

Փրքինգը ճաշարանէն 5 պաշտօնեաներ գացած են կախելու 8 մեթր լայնքով եւ 5 մեթր բարձրութեամբ դրոշակը, որ սակայն կը ծածկուի Արգարեաններու տան ամրոյժ ճակատը: Հետեւաբար պաշտօնեաները դիմած են անոր տան հանդիպակաց շէնքին տնորը, եւ դրոշակը անոր աշխարհային տանիքէն կախուցանուած անհրաժեշտ կտորը: Մեծ դրոշակի մը փնտռուողը գային առաջնորդած է Ուոթըրթոնի Փրքինգը ճաշարանը, որուն սեփականատէքը յայտնած է, թէ վերջերս փոխած էր ճաշարանին հին դրոշակը:

Տուրքիոյ օր իրարու բոլորովին անծանօթ մարդիկ հաւաքուած են Արգարեաններու բնակարանին մէջ՝ դրոշակը յանձնելու եւ դրամատան յատուկ հաշիւին մասին տեղեկացնելու համար:

Պատրաստեց՝ Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

www.homenetmencentral.com

«ԿԵԴՐՈՆԱՆԱԼ՝ ԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՎՐԱՅ»

Ամերիկահայ երգիչներէ եւ երաժիշտներէ բաղկացած «Միսթրմ աֆ Է տաուն» ռոք խումբին անդամներէն Սերժ Թանքեան Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի ահաբեկչական արարքներէն ետք ամերիկացիներուն ուղղած է հետեւեալ կոչը. «Կեդրոնանալ՝ զրական ուժերու վրայ»:

Թանքեանի յայտարարութիւնը կ'ըսէ. «Ամրոյժ աշխարհը ցնցուած է Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ՝ պատահած սարսափելի արարքներէն: Ամրոյժ չարթուան ընթացքին բարեկամներու կը հեռաձայնէի ստուգելու համար, թէ լաւ են: Կը ցաւակցիմ բոլոր այն ընտանիքներուն, որոնք կը տառապին այս խելացնոր արարքին պատճառով»:

«Իրեւ Ամերիկայի քաղաքացիներ»՝ առանձնաշընորհումը ունինք ըսելու այն, ինչ որ կը գգանք, նոյնիսկ երբ ուրիշներ կրնան տարակարծիք ըլլալ: Ինծի համար մեծ նշանակութիւն ունի այն իրողութիւնը, որ վերջերս ծաւալած ողբերգական դէպքերէն ետք տակաւին կրնամ յայտարարութիւնը եւ ձայնագրութիւնը: Մէկ ինդրանք ունիմ. արդարութիւն փնտռելու ճամբուն վրայ կեդրոնանալ կեանքի զրական ուժերուն վրայ, մեր մոլորակին երկարատեւ գոյութեան համար»:

«Ես գոյութիւն պիտի չունենայի, եթէ ամերիկեան որդիները հոգ տարած չըլլային մեծ հօրս, 1915ի Հայկական Յեղասպանութենէն ետք: Հետեւաբար մեծ սէր եւ յարգանք ունիմ այն լաւ բաներուն նկատմամբ, զորս ունի Ամերիկան եւ տակաւին կրնայ իրագործել»:

«Միսթրմ աֆ Է տաուն»-ի վերջերս հրապարակուած «Թոքսիսթի» ալպոմը անցեալ շաբաթ առաջին դիրքը զբաւած է «Սաունտ Սքեմ» ընկերութեան երաժշտական նախասիրութիւններու ցանկին վրայ: Մէկ շարթուան ընթացքին շուրջ 250 հազար Սի. Դի. ներու վաճառքը մը ռոքի հայկական խումբին ապահոված է այս առաջնակարգ դիրքը:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

տոնեայ հայերու, որոնք սակայն փոքրամասնութիւն են:

Կլենտէյլի ոստիկանութիւնը տեղեկագրած է երկու դէպքերու մասին, զորս կը քննէ իրեւ տեղեկատու ուժերը: Մագուսով փաթեցողները մարդ մը տեղեկացուցած է, թէ մէկը բանալիով գծած է իր ինքնաշարժը: Սուտանցի մը սպառնական հեռաձայն մը ստացած է եւ անոր խմիչքի վաճառատան ապակին փշուրած է:

Նոյն թերթը կը գրէ, թէ Կլենտէյլի Քաղաքային խորհուրդի անդամներէն Պապ Եուսէֆեան պատկերասփուռած յայտագրի մը ընթացքին տեղույն հայերուն խորհուրդ տուած է շրջահայեաց ըլլալ յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն:

«Փորձեցի հայ բնակչութեան բացատրել, թէ պէտք է քիչ մը աւելի զգայուն ըլլալ», ըսած է ան: «Կլենտէյլի բնակիչները ընդհանրապէս լաւ մարդիկ են, սակայն չենք կրնար հակաշիւռի տակ պահել անոնք, որոնք ջղաճրճիկ են եւ կը կորսնցնեն իրենց հաւատարմութիւնը: Անոնք թուի մորթով եւ մուշ չափերով ունենան արար պիտի կարծեն»:

Եուսէֆեան հայերը նաեւ զգուշացուցած է իրենց ինքնաշարժին մէջ բարձրաձայն երաժշտութիւնը ունենցողներէ, որովհետեւ մարդիկ կրնան զայն չփոթել արաքական երաժշտութեան հետ: Ան նաեւ խորհուրդ տուած է բարձրաձայն հայերէն չխօսիլ, որովհետեւ մարդիկ կրնան հայերէնը չգիտնալ արաքերէնը: Եուսէֆեան նոյն իսկ առաջարկած է, որ

հայեր իրենց վաճառատուներուն վրայէն վերցընեն հայերէն տառերով արձանագրութիւնները: «Թայմզ Բամիլոնիքի Գէյթրըք» 21 Սեպտեմբերի իր թիւին մէջ կը գրէ, թէ Եուսէֆեանի հրապարակային յայտարարութիւնները քննադատուած են Կլենտէյլի Հայ Դատի խորհուրդի անդամներէն: «Միսթրմ աֆ Է տաուն»-ը կը գրէ, որ մէկ ամբողջութիւն դառնալը:

«Իրականութեան մէջ հարկ չկայ նման յայտարարութիւններով աւելորդ խուճապ ստեղծելու համայնքին մէջ», ըսած է Արթին Մանուկեան: «ժամանակը չէ քաղաքը բաժնելու, երբ ժամանակները կը պահանջեն, որ մէկ ամբողջութիւն դառնալը»:

Քաղաքային խորհուրդի այլ անդամ մը՝ Ժո Մենտոքի անտիդի կը

ՀԱՅ ԶՈՂ ՄԸ՝ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Նիւ Եորքի «Ուրլտ Թրէյտ Սենթր»-ի դէմ կատարուած ահաբեկչական արարքին պատճառով մահացած կամ կորսուած հրշէջներու եւ ոստիկաններու անուանացանկին վրայ իրեն հերոս յիշատակուած են տարագաւոր 403 ծառայողներու անուններ, որոնց շարքին կը կարդանք Պրոքսիմէ Բարի Պետիկեանի անունը (ցանկը հրապարակուած է www.nypost.com կայքին վրայ) իրեն «յարգանքի տուրք»:

նկատէ Եուսէֆեանի յայտարարութիւնը եւ կ'ըսէ. «Հայերուն թեւալորդը, որ չարքին իրենց հայութիւնը, ինքնին ցեղապաշտ արտաքին իրականութիւնը մըն է: Եթէ ես նման բան մը ըսած ըլլայի, ցեղապաշտ պիտի նկատուէի»:

նկատէ Եուսէֆեանի կոչը դժգոհութիւն պատճառած է նաեւ Կլենտէյլի հայ բնակիչներուն, որոնք կ'ըսեն, թէ «պէտք չունին թաքցնելու իրենց մշակութիւնը, ինչպէս կը գրէ «Կլենտէյլ Նիւ Եորք»:

ԴՐՈՇԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՈՂՑՈՒԱԾ ԴՐՈՇԱԿ ՄԸ ԿԱՐԵԿՑԱՆՔԻ ԵՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԿԸ ՄԻԱՅՆԷ ՔԱՂԱՔԻ ՄԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

«Էսոյլիէյթը Փրէս» նկարագրելով դէպքը՝ կը գրէ. «Արգարեանի մեծ մէջ պատահած ահաբեկչական արարքներուն իրեւ հակազդեցութիւն, նաեւ իր հայրենասիրութիւնը պարբերու համար, պարզապէս կ'ուզէր 5 մեթր լայնքով եւ 5 մեթր բարձրութեամբ իր ամբողջութեան դրոշակը պարզել ձեռքիս թանկի իր բնականաւոր վերել, սակայն դրոշակը գետեղելու ժամանակ տանիքէն վար ինկած էր ան՝ վնասելով ողնաշարը: Աւելի անծանօթներ աւելի ուշ գողցած էին անոր փայտայլած 20 տարուան դրոշակը: Արգարեան իր գործէ արձակուած էր, եւ անոր առողջապահական ապահովագրութիւնը զօրու չէր: Հետեւաբար ան մեթած է հիւանդանոց փոխադրուել՝ ընտանիքին խնայելով հիւանդանոցային ծախսերը:

Սակայն անօգնական պիտի չմնար ան...: Քանի մը օր ետք Ռուս Վիր անունով ամերիկացի մը օրաթերթի մը մէջ կարդացած է Արգարեանի մասին եւ մտածած է. «Այն սրիկաները, որոնք գողցան այս մարդուն դրոշակը, ոչ միայն

անյարմար կացութեան մէջ ձգեցին դրոշակին տէքը, այլ նաեւ մեղանշեցին Միացեալ Նահանգներու դէմ՝ այսպիսի դժուար ժամանակի մը մէջ, ըսած է Տուեսթեր-հոֆթ»:

Սկիզբը Տուեսթեր-հոֆթ ուզած է նոյն մեծութեամբ նոր դրոշակ մը կարել, սակայն ան չէ կրցած ճարել արեւու անդամանիշակագոյն ճաւաղապանուած անհրաժեշտ կտորը: Մեծ դրոշակի մը փնտռուողը գային առաջնորդած է Ուոթըրթոնի Փրքինգը ճաշարանը, որուն սեփականատէքը յայտնած է, թէ վերջերս փոխած էր ճաշարանին հին դրոշակը:

Տուեսթեր-հոֆթ բողոքիչը մը վերանորոգած է հին դրոշակը՝ գային Արգարեանի նուիրելու համար: Դրոշակը ծածկած է անոր բնակարանին գետիքը:

Յաջորդ օր իրարու բոլորովին անծանօթ մարդիկ հաւաքուած են Արգարեաններու բնակարանին մէջ՝ դրոշակը յանձնելու եւ դրամատան յատուկ հաշիւին մասին տեղեկացնելու համար:

Պատրաստեց՝ Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

www.homenetmencentral.com

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՊԱՍԵԹՊՈԼ

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Շարաթավերջին, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուժի (Զոքաք էլ Պլաթ) ակումբի պատգէթի դաշտին վրայ կը շարունակուին Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային պատգէթպոլի յանձնախումբին կազմակերպած տղոց եւ աղջկանց միջմասնաճիւղային մրցումները՝ խմբակներու գրուժեամբ։

Այսօր տեղի կ'ունենայ մէկ մրցում, վաղը՝ հինգ, իսկ միւս օրը՝ երկու մրցում։

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը։

● **ՈՒՐԲԱԾ, 28 ՍԵՊՏԵՄԵՐ** Ժամ Պէյրուժ 2 - Անթիլիաս (տղաք՝ Բ. խմբակ) 7:30ին

● **ՇԱՐԱԾ, 29 ՍԵՊՏԵՄԵՐ**
Այնճար - Պուրճ Համուտ (տղաք՝ Ա. խմբակ) 3:30ին
Այնճար - Պաուշրիէ (աղջիկներ՝ Ա. խմբակ) 4:30ին
Թրիփոլի - Պէյրուժ 1 (տղաք՝ Ա. խմբակ) 5:30ին
Թրիփոլի - Անթիլիաս (աղջիկներ՝ Բ. խմբակ) 6:30ին
Ժունիէ - Պաուշրիէ (տղաք՝ Բ. խմբակ) 7:30ին

● **ԿԻՐԱԿԻ, 30 ՍԵՊՏԵՄԵՐ**
Պէյրուժ 1 -
Պուրճ Համուտ (տղաք՝ Ա. խմբակ) 6:00ին
Անթիլիաս - Ժունիէ (տղաք՝ Բ. խմբակ) 7:30ին

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌՈՅՆԱՌԹԻՒՆ

ՆԻԻՔԷՍԸ - ԼԱՅՍԹԸՐ ՍԻԹԻ՝ 1-0

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 2րդ հանգըրուանէն յետաձգուած մրցումի մը, որ Նիւքէսը իր դաշտին վրայ 1-0 արգիւնքով պարտութեան մասնելէ ետք նախափերջին դիրքը գրաւող Լայսթըր Սիթին, բարձրացաւ 5րդ դիրք, Արսենալի եւ Մանչեսթըր Շուսլըտի նման ունենալով 11 կէտ։ Սակայն անիկա իր ունեցած տկար կողմերէն պատճառով կը մնայ անոնց ետին։

Աւելի քան 49 հազար համակիրներու ներկայութեան, Նոլթհէմ Սթրիոն նշանակեց իր կազմին եւ մրցումին «որը» կողը (33րդ)։

Տեղի ունեցած այս մրցումէն ետք, այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը։

	ՄՐՑ.	ԿԵՏ
1.- Լիօ	6	14 (9-1)
2.- Պոլընք	7	12 (10-4)
3.- Արսենալ	6	11 (14-5)
4.- Սաւց. Եունայթըտ	6	11 (17-10)
5.- Նիւքէսը	6	11 (11-9)
.....		
18.- Տերպի Բաուըթի	6	5 (5-10)
19.- Լայսթըր Սիթի	7	5 (5-15)
20.- Սաութհէմթըն	5	3 (2-9)

● **ԿՈԼՍՔՈՐԸՐՆԵՐՈՒ** ընդհանուր դասաւորման մէջ Չեչիլի յառաջապահ ձիւմի Ֆլորյո Հասէլպէնք 6 կողով կը գրաւէ առաջին դիրքը։ 2րդ դիրքը կը գրաւեն Թրիբի Հանրի (Արսենալ) եւ Մայքըլ Ռիքէթց (Պուլթըն), որոնք նշանակած են 3-ական կող։

ՍԻՄԵՆՏԻ ԴԵՏԱԲՐՈՒԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Իտալացի հեծելանուորդ Ֆիլիփօ Սիմէոնի երէկ շահեցաւ Սպանիոյ շրջավազքին 18րդ հանգրուանը, որ տեղի ունեցաւ Ալպասթէէն Բուէնսա (154,5 քմ.)։ Ան ժամանման զիծ հասաւ արձանագրելով 3 ժամ 7 վայրկեան եւ 29 երկվայրկեան արդիւնք մը։ 2րդ հանգրուանը Կիրի վերհէյէն (Պելճիքա), իսկ 3րդ՝ Ռաֆայէլ Տիագ իւրաթօ (Սպանիա)։

Ժամանման զիծէն 15 քմ. առաջ Սանթիակօ Պլանքօ (Սպանիա) կը գտնուէր առաջին դիրքին վրայ, սակայն դարձուածքի մը վրայ Սիմէոնի անցաւ պարագլուխի դիրքին վրայ եւ հոն մնաց մինչեւ 18րդ հանգրուանին աւարտը։

Հետաքրքրական եղաւ Սիմէոնի ժամանման զիծ հասնելը։ Ան քանի մը մեթր առաջ վար թլաւ հեծանիւէն եւ քայլելով՝ հեծանիւը շարկած անցաւ ժամանման զիծը, ուրախ իր կատարած իրագործումով։

Հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնը սակայն 250 տղար տուգանքի ենթարկեց Սիմէոնի, որ իր կատարած այդ ուրախութեան արարքով,



Ֆիլիփօ Սիմէոնի

խախտած էր մրցաշարքին օրէնքները։

Սպանիոյ շրջավազքին այժմ մնացած է երեք հանգրուան միայն եւ Օսթար Սելիլա (Սպանիա) կը շարունակէ իր մօտ պահել ոսկեգոյն շապիկը 25 երկվայրկեանի առաւելութիւն մը ունենալով 2րդ դիրքը գրաւող Անիլ Բասերոյի վրայ։ 3րդ դիրքին վրայ կը գտնուի այլ սպանացի մը՝ Ռոպերթօ Հերաս։

Այսօր տեղի կ'ունենայ 19րդ հանգրուանը՝ Բուէնսայէն Կուստալախա (168 քմ.), իսկ վա-

ղը՝ 20րդ հանգրուանը, Կուստալախա շահէն Ալթօ Ապանթոս (176,5 քմ.)։ 21րդ եւ վերջին հանգրուանը տեղի կ'ունենայ Կիրակի օր Մատրիսի մէջ, որ պիտի ըլլայ ժամացոյցի դէմ անհատական մրցում մը (38 քմ.)։

Ստորեւ՝ 18րդ հանգըրուանին արդիւնքները։

- 1.- Ֆիլիփօ Սիմէոնի (Իտալիա) Բուէնսայէն 3 ժամ 7' 29"
- 2.- Կիրի վերհէյէն (Պելճիքա) Ռապուլու 28' 11"
- 3.- Ռաֆայէլ Տիագ իւրաթօ (Սպանիա) Օնսի (նոյնը)
- 4.- Ռուի Լաւարինհաս (Փորթուգալ) Միլանիկա (նոյնը)
- 5.- Հայմար Զիւպելուխ (Սպանիա) Էուսքալի (նոյնը)

Ընդհանուր դասաւորում.

- 1.- Օսթար Սելիլա (Սպանիա) Բուէնսայէն 61 ժամ 32' 12"
- 2.- Անիլ Բասերո (Սպանիա) Ֆեսիլիկա 25' 11"
- 3.- Ռոպերթօ Հերաս (Սպանիա) Եու. Էս. Փոսթալ 2' 20" 11"
- 4.- Խուան Միկէլ Մերքատո (Սպանիա) Իպու-նեսքո 3' 19" 11"
- 5.- Լեւի Լայպիւսմըր (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ 3' 55" 11"

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՎԵՐՅՆԵ ԹԻՒ 10 ՇԱՊԻԿԸ

Արժանթինի ֆութպոլի ազգային խումբի պատասխանատուները, ֆետերասիոնին որոշումով, թիւ 10 շապիկը կը վերցընեն կազմէն, ի պատիւ բոլոր ժամանակներու մեծագոյն աստղերէն Մարատոնայի։ Այսուհետեւ թիւ 10 շապիկը ունի մէկ պիտի չկրէ ազգային խումբին մէջ։ Լուրը հաստատեց ֆետերասիոնի նախագահ Խուլիօ Կրոնտոն։

Մարատոնա 1997ին քաշուեցաւ ասպարէզէն։ Ան որոշապէս կը նկատուի իր սերունդի աշխարհ լաւագոյն ֆութպոլիստը, իսկ բոլոր ժամանակներու մեծագոյններէն մէկը։

Աւելին. ըստ Կրոնտոնայի՝ Արժանթինի ֆետերասիոնը նաեւ ՖիշԱէն պիտի խնդրէ, որ բոլոր միջազգային մրցումներուն կիրարկուի վերոյիշեալ գրութիւնը, սակայն չի վստահեցներ, թէ նման առաջարկ կրնայ անպայմանօրէն ընդունուիլ։

Մարատոնա իր ասպարէզին ընթացքին երկու անգամ հանգիստացած է աշխարհի ախոյեան։ Ան Արժանթինի տարագով 138 անգամ հանդէս եկած է եւ նշանակած է 61 կող։ Մարատոնա թէեւ կրած է եւրոպական քանի մը կազմերու տարագ, սակայն անոր անունը առա-

ւելարար կապուած է մէկ խումբի՝ Պոքա Ժուլիորգի (Արժանթին)։

Մարատոնայի այս փայլուն էջերուն գիմաց կայ նաեւ զօրախառարար տեղոյն ու ցաւալի էջ մը, որ անպայմանօրէն իր վատ անդրադարձը ունի անոր համբաւին վրայ։ Ան թմրամոլ մըն էր, որուն պատճառով քանի մը անգամ «այցելած է» բանտ, ինչպէս նաեւ յատուկ բուժարաններ։ Ըստ երեւոյթին ան այժմ բուժուած է եւ այլեւս կապ չունի այդ վատ սովորամոլութեան հետ, սակայն ինչ որ գրուեցաւ եւ իստուեցաւ այս գծով իր մասին, վստահարար կը մնայ անջնջելի...



Դպրոցական Դասագիրքեր

- * Հայերէն
- * Անգլերէն
- * Արաբերէն
- * Ֆրանսերէն

* Բառարաններ եւ զարգացումի գիրքեր

Գրատուն ՈՍԿԵԴԱՐԻ մօտ

Library VOSKETAR

National textbooks, all kinds of schoolbooks & dictionaries

Պուրճ Համուտ, Սուրբ Փրկիչ եկեղեցոյ կից Հեռ. 01/264750

Հ.Մ.Ը.Մ. ԿՐՏՍԵՐ ԿԱԶՄԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Կիրակի, 30 Սեպտեմբերին, Նրժմէ Սահրայի դաշտին վրայ (Սիմ էլ Ֆիլ), Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի կրտսեր կազմերը բարեկամական մրցումներ կը կատարեն դաշտին տէրերուն դէմ։ Կէսօրէ ետք ժամը 5:00ին տեղի կ'ունենայ «Ժուլիոր»ներու մրցումը, իսկ ժամը 7:00ին կրտսերներու մրցումը։

ՍԻՄՈՆԷ ՓՈԽ ՏՐՈՒԵՑԱԻ Ա. ՍԷ. ՄԻԼԱՆԻ

Մոնաքոյի յառաջապահ Մարքօ Սիմոնէ մինչեւ այս եղանակին աւարար փոխ տրուեցաւ Ա. Սէ. Միլանի, յայտնեցին իտալական ակումբին պատասխանատուները։

32 տարեկան Սիմոնէ 1997ին լքեց Միլանը, անոր հետ չորս անգամ Իտալիոյ ախոյեանութիւնը եւ երկու անգամ Եւրոպայի բաժակը շահելէ ետք։ Իտալացի միջազգային նախկին մարզիկ Սիմոնէ երկու եղանակ մաս կազմելէ ետք Փարիզ Սէն Ժերմէնի, միացաւ Մոնաքոյի եւ անոր հետ 2000ին շահեցաւ Ֆրանսայի ախոյեանութիւնը։

Իր նախկին կազմին միանալով՝ Սիմոնէ արդեօք պիտի յաջողի՝ հիմնական կազմին մէջ դիրք մը ապահովել, նկատի ունենալով, որ Անտրէյ Շեվչենքօ եւ Ֆիլիփօ Ինչեպիկ կը մնան խումբին կարեւոր տարրեր։

● **ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ** նախկին խմբապետ Փէփ Կուարտիլա մէկ տարուան պայմանագրութիւնը ստորագրեց իտալական Պրեշիա ակումբին հետ, յայտնեցին այս վերջինին պատասխանատուները։

30 տարեկան Կուարտիլա անցեալ եղանակի աւարտին Պարսելոնան լքելէ ետք կը մնար «անգործ»։ 17 երկար տարիներ Պարսելոնայի մաս կազմած Կուարտիլայ իր ակումբը լքելէ ետք, հակառակ անոր որ փորձած էր որեւէ կազմի մը միանալ նախքան 2001-2002 եղանակի սկիզբը, սակայն չէր յաջողած։

Այս կազմութիւնը պատճառ եղած էր, որ Սպանիոյ ֆութպոլի ազգային խումբին մարզիչ Խոսէ Անթոնիօ Քամաչօ նկատի չառնէ Կուարտիլան։ Քամաչօ ըսած էր, որ այն մարզիկը, որ որեւէ խումբի մը հետ փորձեր չի կատարեր, չի կրնար մաս կազմել ազգային խումբին։

● **ՊԱՅԻՐՆ ՄԻԻՆԻՍԻ** յառաջապահ Ալեքսանտր Յիբլըր յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ կը մտադրէ լքել իր կազմը, որովհետեւ ձանձրացած է այլեւ իբրեւ պահեստի մարզիկ նկատի առնուելէ։ 27 տարեկան Յիբլըր, որ 1993ին Տիւնիս Տրեստրէնէն միացաւ Պայէրնի, մինչեւ 2001 թուականը պայմանագրութիւն մը ստորագրած է Պայէրնի հետ, կը յայտնէ, թէ տիտը է իր կազմը լքելուն համար, սակայն այլընտրանք չունենալով, ստիպուած է այդ մէկը գործադրելու։

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

- ❖ SONY
- ❖ TOSHIBA
- ❖ PANASONIC
- ❖ SHARP
- ❖ PHILIPS
- ❖ SAMSUNG
- ❖ PIONEER
- ❖ MEC
- ❖ GENERAL ELECTRIC
- ❖ WHITE WESTINGHOUSE
- ❖ KELVINATOR
- ❖ HOOVER
- ❖ BOSCH
- ❖ MOULINEX
- ❖ BRAUN
- ❖ MIELE

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ LISTE DE MARIAGE

Պուրճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, ՀԵՌԱԶԱՅՆ՝ 01-241000
2րդ մասը, Սաքըր Պլանցըյէն։ Կառտուըն ապահովուած։

Ա Ֆ Ի Լ

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՇՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



85\$

● SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ

ՀԱՍՑԷ.- ԱՅԷՏԻ ԶԷՆԲ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Մարտիկ»ի այս թիւով տեսնէ՝

- Խմբագրական - Մեծագոյն Ուժը
- Ամբաստանաւոր բարոյական արժէքները (Ը.) - Զարուք Զեքիան
- Ղեկավարը նաւապետ է - Կ. Յովհաննէսյան
- Ինչպէս «կարդալ» ինքնուրոյնի հայկական տառերը - Խ.Մ.
- Համահայկական երկրորդ խաղերը աւարտեցան մեծ իսկապատումով
- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի պարգևատրումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց շքանշանով
- Թիւր կ'ընդգրկէ նաեւ սկստական եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ։ 40 գունատու էջեր։ Սակ՝ 3000 լ.ն.։

ՅԱԶՈՐԳԻՒԲԱՅՍՈՒԿ ԹԻՒՆՆԻ ՆՈՒՐՈՒՄԸ

ՀԱՄԱՀ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ:

